



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

22 սեպտեմբերի 2025 թվական

ք.Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահ Արթուր Դավթյանս, ուսումնասիրելով թիվ ԵԴՆ/0574/01/25 (ՀԿԴ/0232/01/25) քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին Հակակոռուպցիոն դատարանի՝ 2025 թվականի սեպտեմբերի 3-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

Վարույթի դատավարական նախապատմությունը.

1. 2025 թվականի փետրվարի 14-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում ստացվել է Վազրիկ Կարենի Սեկոյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ ՀՀ քրեական օրենսգիրք) 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 223-րդ հոդվածի 2-րդ մասով և Արշակ Ռաֆայելի Պողոսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով (2 դրվագ), 189-րդ հոդվածի 1-ին մասով, 223-րդ հոդվածի 2-րդ մասով թիվ 83171324 (ԵԴՆ/0574/01/25) քրեական վարույթը:

1.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը (դատավոր Հ.Ավագյան) 2025 թվականի փետրվարի 19-ին որոշում է կայացրել թիվ ԵԴՆ/0574/01/25 քրեական վարույթը ստանձնելու և նախնական դատախազություն նշանակելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, 2025 թվականի օգոստոսի 26-ին՝ նախնական դատախազների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ԵԴ1/0574/01/25 քրեական վարույթն ըստ ընդդատության Հակակոռուպցիոն դատարան ուղարկելու մասին:

3. Հակակոռուպցիոն դատարանը (դատավոր Մ.Մոսիսյան) 2025 թվականի սեպտեմբերի 3-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0232/01/25 (ԵԴ1/0574/01/25) քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի սեպտեմբերի 11-ին:

Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.

5. Վազրիկ Սեկոյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով և 223-րդ հոդվածի 2-րդ մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքների համար, որ «(...) նա մասնակցել է Մ.Մ-ի և Լ.Ա-ի կողմից սրեղծված և ղեկավարված հանցավոր կազմակերպությանը և դրա կազմում կայարել առանձնապես խոշոր չափերով փողերի լվացում:

Այսպես.

Մ.Մ-ն րևական ժամանակ՝ 2009 թվականից հանցավոր գործունեությամբ՝ ձեռնարկարհրական գործունեությանն ապօրինի մասնակցելու, խարդախության եղանակով առանձնապես խոշոր չափերով գույքի հափշտակությամբ, առանձնապես խոշոր չափերով հարկեր վճարելուց խուսափելու, առանձնապես խոշոր չափերով ապօրինի վարձարություն սրանալու և դրանց արդյունքում սրացված առանձնապես խոշոր չափերով փողերի լվացմամբ զբաղվելու նպարակով սրեղծել և ղեկավարել է հանցավոր կազմակերպություն, դրանում ներառել է բազմաթիվ անձանց՝ հարակ սահմանելով հանցավոր կազմակերպության մասնակիցներից յուրաքանչյուրի դերակարարումը, վարքագծի պարարդիր կանոնները, սահմանվել են հարուկ, իմքի գործունեության համար անհրաժեշտ ներիմքային նորմեր, մի շարք անձանց հեր համարել և օժանդակությամբ կարարել է ծանր հերևանքների առաջացմամբ զուգորդված պաշտոնեական լիազորությունների անցում, օգրագործելով պաշտոնեական դիրքը, համաձայնեցված գործողությունների միջոցով սահմանափակել է այլ անձանց մրցակցությունը՝ կայացրել է հակամրցակցային համաձայնություն, որն ուղղված է եղել այլ րնրեավարող սուրյեկրների շուկա մուրք գործելուն խոչընդոտելուն, հանգեցրել է մրցակցության սահմանափակման՝ պարճառելով առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս, ինչպես նաև ՀՀ բարճրասրիճան պաշտոնարար անձանց րվել է առանձնապես խոշոր չափերով կաշառք:

Մ.Մ-ն, 2008 թվականից մինչև 2012 թվականն ընկած ժամանակահատվածում զբաղեցնելով ** * *, 2013 թվականի մարտի 9-ից մինչև 2018 թվականը՝ * *, 2014 թվականից մինչև 2018 թվականը՝ համարելությամբ * *, 2017 թվականից 2018 թվականն ընկած ժամանակահատվածում՝ համարելությամբ նաև * * պաշտոնները, միևնույն ժամանակ հանդիսանալով ** * * և այդ հանգամանքով պայմանավորված վայելելով վերջինիս անվերապահ վարահոսությունը և հովանավորչությունը, ունենալով անպարժեղիության զգացողություն, ինչպես նաև՝ իրական ազդեցություն ՀՀ պետական, պետական կառավարման համակարգի ոլորտներում բարձրաստիճան պաշտոն զբաղեցնող, ինչպես նաև օրենսդիր, գործադիր իշխանության ոլորտում մշտապես, ժամանակավորապես կամ հատուկ լիազորությամբ պաշտոն զբաղեցնող կամ ծառայություն իրականացնող պաշտոնատար անձանց նկատմամբ, շահադիպական դրդումներով, այն է՝ իր կամ այլ անձի համար գույքային օգուտ ստանալու կամ գույքային ծախսերից կամ պարտավորություններից խուսափելու մղումով, օգտագործելով իր իշխանական, ծառայողական լիազորությունները և դրանցով պայմանավորված ազդեցությունը, ձեռնամուխ է եղել սպորինի եղանակով ՀՀ-ում փրկասական գործունեություն ծավալող խոշոր ձեռնարկատիրական կազմակերպությունների կառավարմանը մասնակցելուն, այդ կազմակերպություններից ստացված անօրինական եկամուտների ստացմանը, նրանց գույքի, բաժնեմասերի կամ փայտածուխի և նյութական այլ միջոցների հափշտակությանը, ՀՀ փրկասության զարգացման համար հեռանկարային ոլորտներում կատարվող ներդրումներից փայտածուխ ստանալուն կամ որևէ կերպ մասնակցություն ունենալու պայմանով համաձայնության փախույն, այդ ընթացքում առաջացած խոչընդոտներն օրենսդիր մարմնում իր ազդեցության ներքո գործող պաշտոնատար անձանց նախաձեռնությամբ օրենսդրական փոփոխություն կատարելու միջոցով կարգավորելուն, խարդախության եղանակով առանձնապես խոշոր չափերով պետական, ինչպես նաև այլ կազմակերպությունների գույքի հափշտակությանը և դրանց արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերով հանցավոր ծագում ունեցող գույքի փոխակերպմանն ու փոխանցմանը, որի արդյունքում փարիներ շարունակ կարողացել է հանցավոր կազմակերպությունն իր հետ սրելուց և ղեկավարող Լ.Ա-ի հետ համարել, ինչպես նաև հանցավոր կազմակերպությանը մասնակցող անձանց օժանդակությամբ անխոչընդոտ կերպով զարբուղի ճանապարհներով, այդ թվում՝ օֆշորային գույրներում հենց այդ նպատակով սրելուց կազմակերպությունների միջոցով, քաղաքացիաիրավական բնույթ կրող տարբեր ձևական գործարքների կնքման տեսքով կամ այլ ֆինանսական պարտավորությունների կատարման պարբերակով ՀՀ-ից դուրս բերել անօրինական ճանապարհով ստացված հսկայական ֆինանսական միջոցները և դրանք ներդնել ինչպես ՀՀ-ում, այնպես էլ օտարերկրյա պետություններում՝ իր հետ

անմիջականորեն փոխկապակցված անձանց կողմից սրեղծված և իր կողմից փաստացի կառավարվող ընկերություններում, Գարբեր առևտրային կազմակերպություններում մասնակցության, ներդրումներ կատարելու, ինչպես նաև անշարժ ու շարժական գույք ձեռք բերելու տեսքով և այդ նպատակով ուղիղ կամ միջնորդավորված եղանակով ձեռք է բերել բաժնեմասեր ինչպես Հայաստանի Հանրապետությունում, այնպես էլ արտերկրում բազմաթիվ ոլորտներում գործունեություն իրականացնող կազմակերպություններում, այդ թվում՝ «Զազգվե», «Դիսթրիբյու», «Եվրասիա Իմփորթ Ընդ Դիսթրիբյուշն», «Զազգկոֆֆ», «ԷյՓԻ Ընդ Էս Քոնսալթինգ», «Պրեսս Սրենդ», «Մեդիա Սթալ», «Արմենիա Թի-Վի», «Ա-Թիվի», «Արմայուգ», «Շանթ», «Պան-արմենիան Մեդիա Գրուպ», «Ադմոսֆեր Արմենիա», «Տելեմեդիակոնտրոլ», «Ջերմուկ Մայր Գործարան», «Ձորագեղ Հիդրո», «Ռոսնեֆտ Արմենիա», «Ռադիո», «Միջազգային Ռադիոցանց», «Եյուգ Էյ Էմ», «Մեդիա Ինթերնեյշնլ Սերվիս», «Դարֆ» («Մեծ Անիվ»), «Տաշտուն Մեթալգ», «Վելոֆիրմա» («Double Tree by Hilton Hotel» հյուրանոց), «Օֆիս Կլաս» («Opera Suite» հյուրանոցային համալիր), «Թաթսթոուն», «Կապոնեկո», «Երևան Մոլ», «Յուքոմ», «Սպայկա», «Ջեյ Էմ Ջի Մենեջմենթ», «Ջի Առ Ի Փի Սի Օ», «Զանգեզուրի Պլանմոնիթրոնային կոմբինատ», «Մոն Մեթալգ», «Սթար Դասթ», «METCORP MANAGEMENT DMCC LIMITED», «METFLOW DMCC LIMITED», «SAMTELL LP», «Իդրամ» և մի շարք այլ ընկերություններում ու դրանց միջոցով սրացել է առանձնապես խոշոր չափերով շահույթներ, հանդիսացել է արտերկրում Շվեյցարիայի Համադաշնությունում, Բրիտանական Վիրջինյան Կղզիներում, Շոտլանդիայում, Լատվիայի Հանրապետությունում, Իրալիայի Հանրապետությունում և այլ երկրներում գործող մի շարք կազմակերպությունների, այդ թվում՝ օֆշորային կազմակերպությունների, դրանց բանկային հաշիվների ուղիղ կամ միջնորդավորված եղանակով իրական շահառու (այդ թվում՝ «EUROPRESS GROUP LTD», «PORTO VIA LP», «MLRE LTD», «WALLTEX EXPRESS LP», «SPENSER INDUSTRIAL LP», «MAM CAPITAL Inc», «VOD GROUP LTD» և այլն), որոնց հաշվեհամարներով շրջանառվել են 100 միլիոնավոր դոլարների հասնող գումարներ:

Ընդ որում, Մ.Մ-ն, Լ.Ա-ն իրենց կողմից սրեղծված և ղեկավարած հանցավոր կազմակերպության նպատակների իրագործումն անխոչընդոտ իրագործելու և անօրինական ֆինանսական միջոցների հոսքի կառավարումը վերահսկելու, հանցանքի կատարման համար բարենպաստ պայմաններ սրեղծելու, հանցավոր ճանապարհով սրացված գույքի իրական բնույթը թաքցնելու, պարկանելությունը, տնօրինման եղանակը, տեղաշարժն ու տեղաբաշխումը քողարկելու նպատակով 2011 թվականի ապրիլի 25-ին Բրիտանական Վիրջինյան Կղզիներում գրանցված՝ օֆշորային «Չարլեյն Օվերսիզ Բորի» կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված «Սթորք Ինվեսթմենթ Հոլդինգ» ՓԲ ընկերությունում («SI Holding») անցկացված խորհրդակցությունների միջոցով սրեղծել են սրվերային կառավարում, դրանում ընդգրկել հանցավոր

կազմակերպության առավել վարահեղի մասնակիցներ Գ.Ա-ին, Ա.Պ-ին, Ռ.Ս-ին, Տ.Ե-ին, Տ.Մ-ին, Արշակ Պողոսյանին, Ա.Մ-ին, Բ.Ս-ին, Վազրիկ Սեկոյանին, Մ.Վ-ին, Ա.Հ-ին, ովքեր երկարատև և մանրակրկիտ պլանավորել են իրենց հետագա գործողությունները, հանցանքը համարել կատարելու նպատակով միավորել են իրենց ջանքերը, որի ընթացքում վերջիններս կանխիկացրել, օգտագործել, փնտրիսել, փոխանցել, ձեռք են բերել հանցավոր ճանապարհով սրացված գույքերը, դրանք ուղղել Մ.Մ-ի և Լ.Ա-ի և փաստացի նրանց պարկանոդ մի շարք ընկերությունների ֆինանսական հոսքերին՝ այդ կերպ միավորել են իրենց ունեցած մարդկային և ֆինանսական միջոցները, հանցանքը համարել կատարելու վերաբերյալ ձեռք բերված նախապես համաձայնությամբ նրանց միջև կատարել դերերի բաշխում, սահմանվել են հարուկ, խմբի գործունեության համար անհրաժեշտ ներխմբային նորմեր, վարքագծի պարտադիր կանոններ, ըստ գործունեության առանձին ուղղությունների նշանակվել է պարասխանատու անձանց հստակ շրջանակ և պարբերաբար «օրակարգում» ընդգրկված հարցերի կապակցությամբ կազմակերպվել քննարկումներ՝ մի շարք կազմակերպությունների ընթացիկ գործունեության, հանցավոր մեխանիզմների կիրառմամբ գույքեր ձեռք բերելու, հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույք փոխանցելու կամ ձեռք բերելու, կազմակերպությունների ընթացիկ գործունեությունը պարզաճ կազմակերպելու համար պաշտոնաբար անձանց միջոցով օրենսդրական փոփոխություններ կատարելու, անձանցից բնակարան և գումար «խլելու», հանցանք քողարկելու նպատակով այլ կազմակերպություն ստեղծելու, շահույթներ բաշխելու, անօրինական եղանակով սրացված ֆինանսական հոսքերը կառավարելու, ի վերջո՝ «Փողերի լվացքը վերջացնելու» մասին հարցեր, այդ կապակցությամբ կազմել համապարասխան արձանագրություններ, որի արդյունքում տրվել են պարտադիր կատարման ենթակա հանձնարարություններ և ցուցումներ, նշանակվել այդ հանձնարարությունների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող անձինք, ովքեր պարբերաբար հաջորդող նիստերի ընթացքում «SI Holding» կազմակերպության գլխավոր փնտրեն Լ.Ա-ին հաշվետվություններ են ներկայացրել տրված հանձնարարությունների ընթացքի և կատարման վերաբերյալ: Նիստերի արդյունքներով կազմված արձանագրությունները դրանց ավարտից հետո նույն կազմակերպության գլխավոր փնտրեն Լ.Ա-ի օգնական Մ.Գ-ի էլեկտրոնային հասցեից ուղարկվել են Մ.Մ-ի, Լ.Ա-ի, Տ.Ե-ի, Ա.Պ-ի, Ռ.Ս-ի, Բ.Ս-ի, Վազրիկ Սեկոյանի և մի շարք այլ անձանց էլեկտրոնային հասցեներին:

Բացի այդ, Մ.Մ-ն, ունենալով անօրինական ճանապարհով սրացված հսկայական ֆինանսական միջոցներ, նպատակ ունենալով շարունակաբար մեծացնել իր ազդեցությունը ՀՀ-ում, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների գործադրմամբ շարունակել իրական ազդեցություն ունենալ ՀՀ-ում հանրային կառավարման ոլորտներում, պետական, պետական կառավարման ոլորտներում, իր փրկապետության և ազդեցության ներքո է վերցրել ՀՀ-ում գործունեություն

ծավալող մի շարք զանգվածային լրատվական միջոցների գործունեությունը և, կառավարելով այդ լրատվամիջոցների կողմից կատարվող տեղեկատվական հոսքերը, անհրաժեշտության դեպքում կատարելով խմբագրումներ, դրանք ծառայեցրել է իր ազդեցության շարունակաբար ընդլայնմանը:

Միաժամանակ, վերը նկարագրված հանցանքները Մ.Մ-ն կատարել է ինչպես
 ** *****
 գործոնն ու դրանով պայմանավորված ազդեցությունը, իր իսկ պաշտոններից բխող ազդեցությունն օգտագործելով, այնպես էլ իր կողմից ստեղծված և փաստացի ղեկավարվող հանցավոր կազմակերպության, իր հետ հանցակցությամբ այլ անձանց կողմից իրականացվող մի շարք հանցագործությունների անկաշկանդ իրականացումն ապահովելու, դրանց՝ հետագա պարթելիությունը բացառելու, հանցավոր կազմակերպության և դրածո այլ անձանց կողմից ծավալած ձեռնարկարհրական և այլ գործունեությունն անարգել իրականացնելու, հնարավոր խոչընդոտները չեզոքացնելու և բացառելու, դրանց իրականացման կապակցությամբ ՀՀ տարբեր պետական մարմիններում հնարավոր արգելքները և սահմանափակումները շրջանցելու ուղղությամբ իրենց լիազորություններից բխող հովանավորչության և թողություն համար բարձրաստիճանի պաշտոնապար անձանց առանձնապես խոշոր չափերով կաշառք տալու արդյունքում:

Մասնավորապես.

Մ.Մ-ն մոր՝ Ա.Հ-ի, Լ.Ա-ի, Ա.Պ-ի, Վազրիկ Սեկոյանի և Արշակ Պողոսյանի հետ հանցավոր կազմակերպության կազմում, և այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ, կատարել է փողերի լվացում՝ փոխանցել, ձեռք է բերել և օգտագործել, փաստացի տիրապետել և տնօրինել է հանցավոր ճանապարհով ստացված՝ առանձնապես խոշոր չափերի գույքեր, որոնք նպատակ են ունեցել թաքցնել և խեղաթյուրել այդ գույքերի հանցավոր ծագումը, պատկանելությունը, գրավելու վայրը, գույքի իրական բնույթը և ծագման աղբյուրը:

Մասնավորապես, Մ.Մ-ն և Ա.Հ-ն իրենց պատկանող և իրենց օրինական եկամուտներին չհամապատասխանող և անօրինական ճանապարհներով ձեռք բերված ֆինանսական միջոցների հանցավոր ծագումը, գրավելու վայրը, գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը և դրանց պատկանելությունը թաքցնելու նպատակով Մ.Մ-ի անվամբ, Ա.Հ-ին պատկանող «MAM CAPITAL Inc» կազմակերպության անվամբ և Ա.Հ-ի անվամբ Շվեյցարիայի Համադաշնության «Վեգելին ԸՆԴ ՔՈ» մասնավոր բանկում բացել են բանկային հաշիվներ, հանդիսացել այդ հաշիվների իրական շահառու: Շվեյցարիայի Համադաշնության «Վեգելին ԸՆԴ ՔՈ» մասնավոր բանկում 2010 թվականին բանկային հաշիվ բացելիս Ա.Հ-ն, նպատակ ունենալով թաքցնել այդ հաշվում անօրինական ծագում ունեցող հանցավոր գործունեության արդյունքում ստացված եկամուտները, մրացածին կեղծ հիմքեր և պարճառաբանություններ է ներկայացրել անօրինական գումարների իրական պատկանելության, ծագման, եկամտի գոյացման աղբյուրների և իրական բնույթի վերաբերյալ՝ նշելով, որ իր հայր Գ.Հ-ն, ով մոտ 20

տարի եղել է Երևանի քաղաքապետ, 1992-1994 թվականների ընթացքում ներդրումներ է կատարել անշարժ գույքի ոլորտում և մինչև մահը՝ 2001 թվականը, կուրակել է ունեցվածք, որը բաղկացած է եղել արվեստի գործերից, ոսկուց, կանխիկ գումարից և անշարժ գույքից (մոտ 80 տոկոս), 1993 թվականին անշարժ գույքի արժեքը կազմել է մոտ 300.000 ԱՄՆ դոլար, 2001 թվականին անշարժ գույքի արժեքը կազմել է մոտ 2.000.000 ԱՄՆ դոլար, իսկ 2010 թվականին՝ 25.000.000-30.000.000 ԱՄՆ դոլար, միաժամանակ նշել է, որ Հայաստանի Հանրապետության անկախությունից հետո հողակտորի մեկ քառակուսի մետրի գինը սկսել է բարձրանալ մինչև 5000-7000 ԱՄՆ դոլար, նշել է նաև, որ 1979 թվականից մինչև հաշվի բացման օրվա դրությամբ աշխատել է Երևանի պետական կոնսերվատորիայում՝ որպես ռուսաց լեզվի և գրականության դասախոս և սրացել է տարեկան մոտ 10.000.000 ԱՄՆ դոլար աշխատավարձ: Այդ կերպ հիմքեր ստեղծելով փոխանցվող կամ հետագայում փոխանցվելիք գումարների օրինականության վերաբերյալ, իրական հնարավորություն ստանալով բացված հաշվեհամարի օգտագործման համար, Մ.Մ-ն և Ա.Հ-ն իրենց վարահեղի անձնավորության՝ փաստացի իրենց պարկանող կազմակերպությունների գործունեության համակարգող Լ.Ա-ի միջոցով, սկսել են կառավարել այդ հաշիվների միջոցով իրականացված ֆինանսական գործարքները, որի արդյունքում սրացել են մեծածավալ ֆինանսական միջոցներ և դրանց օգտագործմամբ (փոխարկմամբ, փոխանցմամբ) ձեռք են բերել Հայաստանի Հանրապետությունում և Բրազիլիայի Հանրապետությունում գրնվող առանձնապես խոշոր չափերով անշարժ գույքեր ու այլ ակտիվներ՝ այդպիսով օրինականացնելով հանցավոր ճանապարհով սրացված գույքը:

Մասնավորապես.

Մ.Մ-ն և Ա.Հ-ն, ունենալով հանցավոր ճանապարհով ձեռք բերված առանձնապես խոշոր չափերով գույքն օրինականացնելու դիտավորություն, վերը նշված հանցավոր սխեմայի կիրառմամբ, օգտվելով փաստացի ձեռնարկարհրական գործունեությամբ չգրառվող և տարբեր ֆիզիկական ու իրավաբանական անձանց ֆինանսական միջոցները քողարկված եղանակով հաճախորդների հանձնարարությամբ հաճախորդների պահանջված հաշիվներին փոխանցելու մասով մասնագիտացված ծառայություններ մատուցող, «Տրոյկա Դիալոգ» կոնցեռնի կազմում գործած «CABOT MARKETING CORPORATION» կազմակերպության, ինչպես նաև նմանապես, կրկին փաստացի ձեռնարկարհրական գործունեություն չիրականացնող «EX-BOND NETWORKS AG» և «NATAN ASSOCIATES Inc» կազմակերպությունների ծառայություններից և 2010-2017 թվականներին այդ կազմակերպությունների միջոցով քողարկված եղանակով շրջանառելով իրենց ֆինանսական միջոցները, դրանք փոխանցել են Մ.Մ-ի անձնական, Ա.Հ-ի «MAM CAPITAL Inc» կազմակերպության և Ա.Հ-ի անվամբ Շվեյցարիայի Համադաշնության «Վեգելին ԸՆԴ ՔՈ» մասնավոր բանկում բացված հաշիվներին: Մասնավորապես, Մ.Մ-ն և Ա.Հ-ն վերը նշված բանկում առկա՝ «MAM

CAPITAL Inc» կազմակերպության հաշվին «Cabot Marketing Corporation» կազմակերպությունից 2010 թվականի հուլիսի 22-ին ստացել են 5.000.000 եվրո, 2012 թվականի դեկտեմբերի 29-ին՝ 1.982.000 եվրո, 2010 թվականի հոկտեմբերի 8-ին «EXBOND NETWORKS AG» կազմակերպությունից ստացել են 9.884.994,79 եվրո, Մ.Մ-ի անձնական հաշվին՝ «CABOT MARKETING CORPORATION» կազմակերպությունից՝ 2010 թվականի հուլիսի 23-ին ստացվել է 1.000.000 եվրո, Ա.Հ-ի հաշվին «CABOT MARKETING CORPORATION» կազմակերպությունից 2010 թվականի հուլիսի 27-ին՝ 1.450.000 եվրո, իսկ 2011 թվականի հուլիսի 1-ին «NATAN ASSOCIATES Inc» կազմակերպությունից՝ 5.481.475 եվրո:

Վերը նշված հանցավոր ճանապարհով ձեռք բերված ընդհանուր 24.798.469 եվրոն Մ.Մ-ն և Ա.Հ-ն օրինականացրել են՝ «MAM CAPITAL Inc» կազմակերպության, նաև այլ անձանց, այդ թվում՝ Լ.Ա-ի անվամբ հաշվառված տարբեր կազմակերպությունների՝ «SPENSER INDUSTRIAL LP», «PORTO VIA LP», «VOD GROUP LTD» միջոցով այլ ակտիվներ՝ բաժնեմասեր, բաժնետոմսեր, անշարժ գույք ձեռք բերելու եղանակով, որի ընթացքում, հանցավոր ճանապարհով ստացված գումարի ծագման աղբյուրը, տեղաշարժը, պատկանելությունը թաքցնելու և խեղաթյուրելու նպատակով՝ ինչպես իրենց, այնպես էլ «MAM CAPITAL Inc», «SPENSER INDUSTRIAL LP», «PORTO VIA LP», «VOD GROUP LTD» կազմակերպությունների անունից ու նրանց միջև՝ կնքել են ձևական բնույթ կրող վարկային պայմանագրեր, համաձայնագրեր և դրանց հիման վրա կատարել ֆինանսական միջոցների փոխանցումներ՝ այդ կերպ քաղաքացիաիրավական ձևական գործարքների միջոցով հասնելով հանցավոր ծագում ունեցող դրամական միջոցների ներդրմանը շրջանառության մեջ:

Մ.Մ-ն, Լ.Ա-ն Արշակ Պողոսյանի, Ա.Հ-ի և Վազրիկ Սեկոյանի հետ հանցավոր կազմակերպության կազմում, նպատակ ունենալով քողարկել հանցավոր ճանապարհով ստացված գումարների ծագման աղբյուրը և տեղաշարժը, թաքցնել ու խեղաթյուրել դրանց պատկանելությունը, Հայաստանի Հանրապետությունում գործունեություն ծավալող «Շին Տավր» ՍՊ ընկերության (2018 թվականի մայիսի 23-ից՝ «Երևան Մոլ» ՍՊ ընկերություն) բաժնեմասերը ձեռք բերելու նպատակով փաստացի իրենց պատկանող «MAM CAPITAL Inc» կազմակերպության և «SPENSER INDUSTRIAL LP» կազմակերպության (որի անունից հանդես է եկել Լ.Ա-ն) միջև 2013 և 2014 թվականին կնքել են ձևական վարկային պայմանագրեր, որոնց հիման վրա նույն թվականներին «MAM CAPITAL Inc» կազմակերպության
***** հաշվից ընդհանուր 3.700.000 եվրո փոխանցվել է «SPENSER INDUSTRIAL LP» կազմակերպության «RIETUMU» բանկում բացված լարվիական ***** հաշվին:

Ձեռք բերված համաձայնության շրջանակներում հանցավոր ծագում ունեցող հիշյալ գումարից 3.620.000 եվրոն փոխանցվել է Մ.Մ-ին և Լ.Ա-ին փաստացի պատկանող «MLRE LTD» ընկերության հաշվին, ում անունից որպես լիազորված անձ հանդես է եկել Արշակ Պողոսյանը: Բացի այդ, Մ.Մ-ին փաստացի պատկանող

նշ ռեզիդենտը «WALLTEX EXPRESS LP» կազմակերպության հաշվից 2013 թվականի մայիսի 6-ին կանխիկացված 1.250.000 դոլար գումարից 1.000.000 դոլարը նույն օրը մուրքագրվել է «MLRE LTD» ընկերության հաշվին: Դրանից հետո, ոչ ռեզիդենտը «ART JAN LIMITED» կազմակերպությունից 2013 թվականի հունիսի 3-ին և ոչ ռեզիդենտը «PORTO VIA LP» կազմակերպությունից 2013 թվականի հունիսի 6-ին «MLRE LTD» ընկերության հաշվին փոխանցվել է յուրաքանչյուր կազմակերպությունից 3.000.000 եվրո՝ ընդհանուր 6.000.000 եվրո: «MLRE LTD» ընկերության հաշվին փոխանցված հանցավոր ծագում ունեցող վերը նշված գումարները միախառնվել են ընկերության հաշվին եղած հանցավոր ծագում ունեցող գումարներին, որից հետո «MLRE LTD» ընկերության կողմից 2013 թվականի հունիսի 21-ից մինչև 2014 թվականի հունվարի 29-ն ընկած ժամանակահատվածում «Շին Տավր» ՍՊ ընկերության հաշվին փոխանցվել է առնվազն 3.124.800.000 ՀՀ դրամ՝ «կանոնադրական կապիտալի ներդրում» նպատակով: Արդյունքում՝ «MLRE LTD» ընկերությունը դարձել է «Շին Տավր» ՍՊ ընկերության բաժնետերեր՝ 30 տոկոսի չափով: Միաժամանակ, 2013 թվականի սեպտեմբերի 27-ին տեղի ունեցած՝ «Շին Տավր» ՍՊ ընկերության մասնակիցների ժողովի ընթացքում Մ.Մ-ի և Լ.Ա-ի մրերին, վերջիններիս պարկանող մի շարք ընկերությունների աշխատակից և հանցավոր կազմակերպության մասնակից Վազրիկ Սեկոյանը նշանակվել է ընկերության տնօրեն:

Շարունակելով հանցավոր ծագում ունեցող գույքի փոխանցման գործընթացը, գործարքներին օրինական քաղաքացիաիրավական տեսք հաղորդելու նպատակով, արդեն իսկ հանցավոր ճանապարհով ձեռք բերված «Երևան Մոլ» ՍՊ ընկերության 30 տոկոս բաժնեմասերի իրական պարկանելությունը թաքցնելու նպատակով, Մ.Մ-ի, Ա.Հ-ի, Լ.Ա-ի, Արշակ Պողոսյանի և Վազրիկ Սեկոյանի միջև ձեռք բերված հանցավոր համաձայնությամբ, 2019 թվականի հունվարի 15-ին «MLRE LTD» ընկերությունը՝ ի դեմս լիազորված անձ Արշակ Պողոսյանի, և Վազրիկ Սեկոյանը կնքել են բաժնեմասերի առուվաճառքի ձևական պայմանագիր, որով «MLRE LTD» ընկերությունն իրեն պարկանող՝ «Երևան Մոլ» ՍՊ ընկերության կանոնադրական կապիտալի 30 տոկոսը կազմող 30 բաժնեմասերն իբրև 3.200.000.000 ՀՀ դրամով ամբողջությամբ վաճառել է Վազրիկ Սեկոյանին՝ այդ կերպ վերջնարդյունքում օրինականացնելով հանցավոր ճանապարհով սրացված՝ առանձնապես խոշոր չափերով գումարները:

Այսպիսով, Մ.Մ-ն, Ա.Հ-ն և Լ.Ա-ն Արշակ Պողոսյանի և Վազրիկ Սեկոյանի հետ հանցավոր կազմակերպության կազմում, հանցավոր ճանապարհով ձեռք բերված գումարներից 3.124.800.000 ՀՀ դրամի ծագման աղբյուրը, տեղաշարժը փարբեր պայմանագրերի ներքո քողարկելով, գումարի պարկանելությունը թաքցնելով և խեղաթյուրելով, այն շրջանառվել է «MAM CAPITAL Inc», «SPENSER INDUSTRIAL LP», «WALLTEX EXPRESS LP», «MLRE LTD» կազմակերպությունների հաշվեհամարների միջոցով ու վերջնարդյունքում առնվազն 3.124.800.000 ՀՀ դրամ փոխանցվել է «Շին Տավր» ՍՊ ընկերությանը՝ նշված եղանակով վճարվելով

ընկերության բաժնեմասերի արժեքը, իսկ հետագայում Արշակ Պողոսյանը փոխանցել, իսկ Վազրիկ Սեկոյանը ձեռք է բերել հանցավոր ճանապարհով ստացված՝ արդեն իսկ «Երևան Մոլ» անվանումը կրող ՍՊ ընկերության բաժնեմասերը՝ թաքցնելով ընկերության բաժնետոմսերի իրական պարկանելությունը (...):»¹:

6. Արշակ Պողոսյանի նկատմամբ երկու դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 189-րդ հոդվածի 1-ին մասով և 223-րդ հոդվածի 2-րդ մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքների համար, որ «(...) նա մասնակցել է Մ.Մ-ի և Լ.Ա-ի կողմից ստեղծված և ղեկավարված հանցավոր կազմակերպությանը և դրա կազմում կայարարել իրավաբանական անձ ստեղծելու և այն օգտագործելու միջոցով ապօրինի գործունեություն և առանձնապես խոշոր չափերով փողերի լվացում:

Այսպես.

Մ.Մ-ն Կրակաձորի ժամանակ՝ 2009 թվականից հանցավոր գործունեությամբ՝ ձեռնարկարիական գործունեությանն ապօրինի մասնակցելու, խարդախության եղանակով առանձնապես խոշոր չափերով գույքի հափշտակությամբ, առանձնապես խոշոր չափերով հարկեր վճարելուց խուսափելու, առանձնապես խոշոր չափերով ապօրինի վարձարժեքներ ստանալու և դրանց արդյունքում ստացված առանձնապես խոշոր չափերով փողերի լվացմամբ զբաղվելու նպատակով ստեղծել և ղեկավարել է հանցավոր կազմակերպություն, դրանում ներառել է բազմաթիվ անձանց՝ հստակ սահմանելով հանցավոր կազմակերպության մասնակիցներից յուրաքանչյուրի դերակատարումը, վարքագծի պարտադիր կանոնները, սահմանվել են հարուստ, իսկ գործունեության համար անհրաժեշտ ներխուժային նորմեր, մի շարք անձանց հետ համարել և օժանդակությամբ կայարարել է ծանր հեղինակների առաջացմամբ զուգորդված պաշտոնական լիազորությունների անցում, օգտագործելով պաշտոնական դիրքը, համաձայնեցված գործողությունների միջոցով սահմանափակել է այլ անձանց մրցակցությունը՝ կայացրել է հակամրցակցային համաձայնություն, որն ուղղված է եղել այլ փորձավարող սուբյեկտների շուկա մուտք գործելուն խոչընդոտելուն, հանգեցրել է մրցակցության սահմանափակման՝ պարձառելով առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս, ինչպես նաև ՀՀ բարձրաստիճան պաշտոնատար անձանց ցրվել է առանձնապես խոշոր չափերով կաշառք:

Մ.Մ-ն, 2008 թվականից մինչև 2012 թվականն ընկած ժամանակահատվածում զբաղեցնելով ** * 2013 թվականի մարտի 9-ից մինչև 2018 թվականը՝ **** * 2014 թվականից մինչև 2018 թվականը՝ համարելությամբ ***** , 2017 թվականից 2018 թվականն ընկած ժամանակահատվածում՝ համարելությամբ նաև ***** պաշտոնները, միևնույն ժամանակ

¹ Տե՛ս քրեական վարույթ, հատոր 36, թերթեր 50-57:

գործունեություն իրականացնող կազմակերպություններում, այդ թվում՝ «Ջազզվե», «Դիսթրիբյու», «Եվրասիա Ինֆորթ Ընդ Դիսթրիբյուշն», «Ջազզկոֆֆ», «ԷյՓԻ Ընդ Էս Բոնասայթինգ», «Պրեսս Սրենդ», «Մեդիա Սթայլ», «Արմենիա Թի-Վի», «Ա-Թիվի», «Արմյուլզ», «Շանթ», «Պան-արմենիան Մեդիա Գրուպ», «Ադմոսֆեր Արմենիա», «Տելեմեդիակոնսորթոլ», «Ջերմուկ Մայր Գործարան», «Ձորագեղ Զիդրո», «Ռոսնեֆտ Արմենիա», «Ռադիո», «Միջազգային Ռադիոցանց», «Նյուզ Էյ Էմ», «Մեդիա Ինթերնեյշնլ Սերվիս», «Դարֆ» («Մեծ Անիվ»), «Տաշտուն Մեթալզ», «Վելոֆիրմա» («Double Tree by Hilton Hotel» հյուրանոց), «Օֆիս Կլաս» («Opera Suite» հյուրանոցային համալիր), «Թաթթոուն», «Կապուեկո», «Երևան Մոլ», «Յուքում», «Սպայկա», «Ջեյ Էմ Ջի Մենեջմենթ», «Ջի Առ Ի Փի Սի Օ», «Զանգեզուրի Պրոֆեսիոնալ Պրոյեկտ Մենեջմենթ Կոմփանի», «Մուն Մեթալ», «Սթար Դասթ», «METCORP MANAGEMENT DMCC LIMITED», «METFLOW DMCC LIMITED», «SAMTELL LP», «Իդրամ» և մի շարք այլ ընկերություններում ու դրանց միջոցով ստացել է առանձնապես խոշոր չափերով շահույթներ, հանդիսացել է արտերկրում Շվեյցարիայի Համադաշնությունում, Բրիտանական Վիրջինյան Կղզիներում, Շոտլանդիայում, Լատվիայի Հանրապետությունում, Իտալիայի Հանրապետությունում և այլ երկրներում գործող մի շարք կազմակերպությունների, այդ թվում՝ օֆշորային կազմակերպությունների, դրանց բանկային հաշիվների ուղիղ կամ միջնորդավորված եղանակով իրական շահառու (այդ թվում՝ «EUROPRESS GROUP LTD», «PORTO VIA LP», «MLRE LTD», «WALLTEX EXPRESS LP», «SPENSER INDUSTRIAL LP», «MAM CAPITAL Inc», «VOD GROUP LTD» և այլն), որոնց հաշվեհամարներով շրջանառվել են 100 միլիոնավոր դոլարների հասնող գումարներ:

Ընդ որում, Մ.Մ-ն, Լ.Ա-ն իրենց կողմից ստեղծված և ղեկավարած հանցավոր կազմակերպության նպատակների իրագործումն անխոչընդոտ իրագործելու և անօրինական ֆինանսական միջոցների հոսքի կառավարումը վերահսկելու, հանցանքի կատարման համար բարենպաստ պայմաններ ստեղծելու, հանցավոր ճանապարհով ստացված գույքի իրական բնույթը թաքցնելու, պարկանելությունը, փնտրման եղանակը, փեղաշարժն ու փեղաբաշխումը քողարկելու նպատակով 2011 թվականի ապրիլի 25-ին Բրիտանական Վիրջինյան Կղզիներում գրանցված՝ օֆշորային «Չարլեյն Օվերսիզ Բորո» կազմակերպության կողմից Հայաստանի Հանրապետությունում հիմնադրված «Սթորք Ինվեսթմենթ Հոլդինգ» ՓԲ ընկերությունում («SI Holding») անցկացված խորհրդակցությունների միջոցով ստեղծել են սրվերային կառավարում, դրանում ընդգրկել հանցավոր կազմակերպության առավել վարահեղի մասնակիցներ Գ.Ա-ին, Ա.Պ-ին, Ռ.Ս-ին, Տ.Ե-ին, Տ.Մ-ին, Արշակ Պողոսյանին, Ա.Մ-ին, Բ.Ս-ին, Վազրիկ Սեկոյանին, Մ.Վ-ին, Ա.Հ-ին, ովքեր երկարատև և մանրակրկիտ պլանավորել են իրենց հետագա գործողությունները, հանցանքը համարել կատարելու նպատակով միավորել են իրենց ջանքերը, որի ընթացքում վերջիններս կանխիկացրել, օգտագործել, փնտրիել, փոխանցել, ձեռք են բերել հանցավոր ճանապարհով ստացված

գույքերը, դրանք ուղղել Մ.Մ-ի և Լ.Ա-ի և փաստացի նրանց պատկանող մի շարք ընկերությունների ֆինանսական հոսքերին՝ այդ կերպ միավորել են իրենց ունեցած մարդկային և ֆինանսական միջոցները, հանցանքը համալրել կատարելով վերաբերյալ ձեռք բերված նախապես համաձայնությամբ նրանց միջև կատարել դերերի բաշխում, սահմանվել են հարուկ, խմբի գործունեության համար անհրաժեշտ ներխմային նորմեր, վարքագծի պարտադիր կանոններ, ըստ գործունեության առանձին ուղղությունների նշանակվել է պարասփանսարու անձանց հարակ շրջանակ և պարբերաբար «օրակարգում» ընդգրկված հարցերի կապակցությամբ կազմակերպվել քննարկումներ՝ մի շարք կազմակերպությունների ընթացիկ գործունեության, հանցավոր մեխանիզմների կիրառմամբ գույքեր ձեռք բերելու, հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույք փոխանցելու կամ ձեռք բերելու, կազմակերպությունների ընթացիկ գործունեությունը պարզաճ կազմակերպելու համար պաշտոնաբար անձանց միջոցով օրենսդրական փոփոխություններ կատարելու, անձանցից բնակարան և գումար «խլելու», հանցանք քողարկելու նպատակով այլ կազմակերպություն ստեղծելու, շահույթներ բաշխելու, անօրինական եղանակով ստացված ֆինանսական հոսքերը կառավարելու, ի վերջո՝ «Փողերի լվացքը վերջացնելու» մասին հարցեր, այդ կապակցությամբ կազմել համապատասխան արձանագրություններ, որի արդյունքում տրվել են պարտադիր կատարման ենթակա հանձնարարություններ և ցուցումներ, նշանակվել այդ հանձնարարությունների կատարման նկատմամբ վերահսկողություն իրականացնող անձինք, ովքեր պարբերաբար հաջորդող նիստերի ընթացքում «SI Holding» կազմակերպության գլխավոր տնօրեն Լ.Ա-ին հաշվետվություններ են ներկայացրել տրված հանձնարարությունների ընթացքի և կատարման վերաբերյալ: Նիստերի արդյունքներով կազմված արձանագրությունները դրանց ավարտից հետո նույն կազմակերպության գլխավոր տնօրեն Լ.Ա-ի օգնական Մ.Գ-ի էլեկտրոնային հասցեից ուղարկվել են Մ.Մ-ի, Լ.Ա-ի, Տ.Ե-ի, Ա.Պ-ի, Ռ.Ս-ի, Բ.Ս-ի, Վազրիկ Սեկոյանի և մի շարք այլ անձանց էլեկտրոնային հասցեներին:

Բացի այդ, Մ.Մ-ն, ունենալով անօրինական ճանապարհով ստացված հսկայական ֆինանսական միջոցներ, նպատակ ունենալով շարունակաբար մեծացնել իր ազդեցությունը ՀՀ-ում, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների գործադրմամբ շարունակել իրական ազդեցություն ունենալ ՀՀ-ում հանրային կառավարման ոլորտներում, պետական, պետական կառավարման ոլորտներում, իր տիրապետության և ազդեցության ներքո է վերցրել ՀՀ-ում գործունեություն ծավալող մի շարք զանգվածային լրատվական միջոցների գործունեությունը և, կառավարելով այդ լրատվամիջոցների կողմից կատարվող տեղեկատվական հոսքերը, անհրաժեշտության դեպքում կատարելով խմբագրումներ, դրանք ծառայեցրել է իր ազդեցության շարունակաբար ընդլայնմանը:

Միաժամանակ, վերը նկարագրված հանցանքները Մ.Մ-ն կատարել է ինչպես

*** ***** գործուն ու դրանով պայմանավորված

ազդեցությունը, իր իսկ պաշտոններից բխող ազդեցությունն օգտագործելով, այնպես էլ իր կողմից ստեղծված և փաստացի ղեկավարվող հանցավոր կազմակերպության, իր հետ հանցակցությամբ այլ անձանց կողմից իրականացվող մի շարք հանցագործությունների անկաշկանդ իրականացումն ապահովելու, դրանց՝ հետագա պարժելիությունը բացառելու, հանցավոր կազմակերպության և դրածո այլ անձանց կողմից ծավալված ձեռնարկարհրական և այլ գործունեությունն անարգել իրականացնելու, հնարավոր խոչընդոտները չեզոքացնելու և բացառելու, դրանց իրականացման կապակցությամբ ՀՀ տարբեր պետական մարմիններում հնարավոր արգելքները և սահմանափակումները շրջանցելու ուղղությամբ իրենց լիազորություններից բխող հովանավորչության և թողություն համար բարձրաստիճան պաշտոնատար անձանց առանձնապես խոշոր չափերով կաշառք տալու արդյունքում:

Մասնավորապես.

Մ.Մ-ն մոր՝ Ա.Հ-ի, Լ.Ա-ի, Ա.Պ-ի, Վազրիկ Սեկոյանի և Արշակ Պողոսյանի հետ հանցավոր կազմակերպության կազմում, և այլ անձանց հետ նախնական համաձայնությամբ, կատարել է փողերի լվացում՝ փոխանցել, ձեռք է բերել և օգտագործել, փաստացի տիրապետել և տնօրինել է հանցավոր ճանապարհով ստացված՝ առանձնապես խոշոր չափերի գույքեր, որոնք նպատակ են ունեցել թաքցնել և խեղաթյուրել այդ գույքերի հանցավոր ծագումը, պարկանելությունը, գտնվելու վայրը, գույքի իրական բնույթը և ծագման աղբյուրը:

Մասնավորապես, իրենց պարկանող և իրենց օրինական եկամուրներին չհամապատասխանող և անօրինական ճանապարհներով ձեռք բերված ֆինանսական միջոցների հանցավոր ծագումը, գտնվելու վայրը, գույքի իրական բնույթը, ծագման աղբյուրը և դրանց պարկանելությունը թաքցնելու նպատակով Մ.Մ-ի անվամբ, Ա.Հ-ին պարկանող «MAM CAPITAL Inc» կազմակերպության անվամբ և Ա.Հ-ի անվամբ Շվեյցարիայի Համադաշնության «Վեգելին ԸՆԴ ՔՈ» մասնավոր բանկում բացել են բանկային հաշիվներ, հանդիսացել այդ հաշիվների իրական շահառու: Շվեյցարիայի Համադաշնության «Վեգելին ԸՆԴ ՔՈ» մասնավոր բանկում 2010 թվականին բանկային հաշիվ բացելիս Ա.Հ-ն, նպատակ ունենալով թաքցնել այդ հաշվում անօրինական ծագում ունեցող հանցավոր գործունեության արդյունքում ստացված եկամուրները, մրացածին կեղծ հիմքեր և պարճառաբանություններ է ներկայացրել անօրինական գումարների իրական պարկանելության, ծագման, եկամտի գոյացման աղբյուրների և իրական բնույթի վերաբերյալ՝ նշելով, որ իր հայր Գ.Հ-ն, ով մոտ 20 տարի եղել է Երևանի քաղաքապետ, 1992-1994 թվականների ընթացքում ներդրումներ է կատարել անշարժ գույքի ոլորտում և մինչև մահը՝ 2001 թվականը, կուտակել է ունեցվածք, որը քաղկացած է եղել արվեստի գործերից, ոսկուց, կանխիկ գումարից և անշարժ գույքից (մոտ 80 տոկոս), 1993 թվականին անշարժ գույքի արժեքը կազմել է մոտ 300.000 ԱՄՆ դոլար, 2001 թվականին անշարժ գույքի արժեքը կազմել է մոտ 2.000.000 ԱՄՆ դոլար, իսկ 2010 թվականին՝ 25.000.000-30.000.000 ԱՄՆ դոլար,

միաժամանակ նշել է, որ Հայաստանի Հանրապետության անկախությունից հետո հողակտորի մեկ քառակուսի մետրի գինը սկսել է բարձրանալ մինչև 5000-7000 ԱՄՆ դոլար, նշել է նաև, որ 1979 թվականից մինչև հաշվի բացման օրվա դրությամբ աշխարել է Երևանի պետական կոնսերվատորիայում՝ որպես ուսաց լեզվի և գրականության դասախոս և սրացել է տարեկան մոտ 10.000.000 ԱՄՆ դոլար աշխատավարձ: Այդ կերպ հիմքեր ստեղծելով փոխանցվող կամ հետագայում փոխանցվելիք գումարների օրինականության վերաբերյալ, իրական հնարավորություն ստանալով բացված հաշվեհամարի օգտագործման համար, Մ.Մ-ն և Ա.Հ-ն իրենց վարահեղի անձնավորության՝ փաստացի իրենց պարկանող կազմակերպությունների գործունեության համակարգող Լ.Ա-ի միջոցով, սկսել են կառավարել այդ հաշիվների միջոցով իրականացված ֆինանսական գործարքները, որի արդյունքում սրացել են մեծածավալ ֆինանսական միջոցներ և դրանց օգտագործմամբ (փոխարկմամբ, փոխանցմամբ) ձեռք են բերել Հայաստանի Հանրապետությունում և Բուլղարիայի Հանրապետությունում գրավող առանձնապես խոշոր չափերով անշարժ գույքեր ու այլ ակտիվներ՝ այդպիսով օրինականացնելով հանցավոր ճանապարհով սրացված գույքը:

Մասնավորապես.

Մ.Մ-ն և Ա.Հ-ն, ունենալով հանցավոր ճանապարհով ձեռք բերված առանձնապես խոշոր չափերով գույքն օրինականացնելու դիտավորություն, վերը նշված հանցավոր սխեմայի կիրառմամբ, օգտվելով փաստացի ձեռնարկատիրական գործունեությամբ չգրադվող և տարբեր ֆիզիկական ու իրավաբանական անձանց ֆինանսական միջոցները քողարկված եղանակով հաճախորդների հանձնարարությամբ հաճախորդների պահանջված հաշիվներին փոխանցելու մասով մասնագիտացված ծառայություններ մատուցող, «Տրոյկա Դիալոգ» կոնցեռնի կազմում գործած «CABOT MARKETING CORPORATION» կազմակերպության, ինչպես նաև նմանատիպ, կրկին փաստացի ձեռնարկատիրական գործունեություն չիրականացնող «EX-BOND NETWORKS AG» և «NATAN ASSOCIATES Inc» կազմակերպությունների ծառայություններից և 2010-2017 թվականներին այդ կազմակերպությունների միջոցով քողարկված եղանակով շրջանառելով իրենց ֆինանսական միջոցները, դրանք փոխանցել են Մ.Մ-ի անձնական, Ա.Հ-ի «MAM CAPITAL Inc» կազմակերպության և Ա.Հ-ի անվամբ Շվեյցարիայի Համադաշնության «Լեգելին ԸՆԴ ՔՈ» մասնավոր բանկում բացված հաշիվներին: Մասնավորապես, Մ.Մ-ն և Ա.Հ-ն վերը նշված բանկում առկա՝ «MAM CAPITAL Inc» կազմակերպության հաշվին «Cabot Marketing Corporation» կազմակերպությունից 2010 թվականի հուլիսի 22-ին սրացել են 5.000.000 եվրո, 2012 թվականի դեկտեմբերի 29-ին՝ 1.982.000 եվրո, 2010 թվականի հոկտեմբերի 8-ին «EXBOND NETWORKS AG» կազմակերպությունից սրացել են 9.884.994,79 եվրո, Մ.Մ-ի անձնական հաշվին՝ «CABOT MARKETING CORPORATION» կազմակերպությունից՝ 2010 թվականի հուլիսի 23-ին սրացվել է 1.000.000 եվրո, Ա.Հ-ի հաշվին «CABOT MARKETING CORPORATION» կազմակերպությունից 2010

թվականի հուլիսի 27-ին՝ 1.450.000 եվրո, իսկ 2011 թվականի հուլիսի 1-ին «NATAN ASSOCIATES Inc» կազմակերպությունից՝ 5.481.475 եվրո:

Վերը նշված հանցավոր ճանապարհով ձեռք բերված ընդհանուր 24.798.469 եվրոն Մ.Մ-ն և Ա.Հ-ն օրինականացրել են՝ «MAM CAPITAL Inc» կազմակերպության, նաև այլ անձանց, այդ թվում՝ Լ.Ա-ի անվամբ հաշվառված տարբեր կազմակերպությունների՝ «SPENSER INDUSTRIAL LP», «PORTO VIA LP», «VOD GROUP LTD» միջոցով այլ ակտիվներ՝ բաժնեմասեր, բաժնետոմսեր, անշարժ գույք ձեռք բերելու եղանակով, որի ընթացքում, հանցավոր ճանապարհով սրացված գումարի ծագման աղբյուրը, տեղաշարժը, պարկանելությունը թաքցնելու և խեղաթյուրելու նպատակով՝ ինչպես իրենց, այնպես էլ «MAM CAPITAL Inc», «SPENSER INDUSTRIAL LP», «PORTO VIA LP», «VOD GROUP LTD» կազմակերպությունների անունից ու նրանց միջև՝ կնքել են ձևական բնույթ կրող վարկային պայմանագրեր, համաձայնագրեր և դրանց հիման վրա կատարել ֆինանսական միջոցների փոխանցումներ՝ այդ կերպ քաղաքացիաիրավական ձևական գործարքների միջոցով հասնելով հանցավոր ծագում ունեցող դրամական միջոցների ներդրմանը շրջանառության մեջ:

Մ.Մ-ն, Լ.Ա-ն Արշակ Պողոսյանի, Ա.Հ-ի և Վազրիկ Սեկոյանի հետ հանցավոր կազմակերպության կազմում, նպատակ ունենալով քողարկել հանցավոր ճանապարհով սրացված գումարների ծագման աղբյուրը և տեղաշարժը, թաքցնել ու խեղաթյուրել դրանց պարկանելությունը, Հայաստանի Հանրապետությունում գործունեություն ծավալող «Շին Տավր» ՍՊ ընկերության (2018 թվականի մայիսի 23-ից՝ «Երևան Մոլ» ՍՊ ընկերություն) բաժնեմասերը ձեռք բերելու նպատակով փաստացի իրենց պարկանող «MAM CAPITAL Inc» կազմակերպության և «SPENSER INDUSTRIAL LP» կազմակերպության (որի անունից հանդես է եկել Լ.Ա-ն) միջև 2013 և 2014 թվականին կնքել են ձևական վարկային պայմանագրեր, որոնց հիման վրա նույն թվականներին «MAM CAPITAL Inc» կազմակերպության
***** հաշվից ընդհանուր 3.700.000 եվրո փոխանցվել է «SPENSER INDUSTRIAL LP» կազմակերպության «RIETUMU» բանկում բացված լարվիական ***** հաշվին:

Ձեռք բերված համաձայնության շրջանակներում հանցավոր ծագում ունեցող հիշյալ գումարից 3.620.000 եվրոն փոխանցվել է Մ.Մ-ին և Լ.Ա-ին փաստացի պարկանող «MLRE LTD» ընկերության հաշվին, ում անունից որպես լիազորված անձ հանդես է եկել Արշակ Պողոսյանը: Բացի այդ, Մ.Մ-ին փաստացի պարկանող ոչ ռեզիդենտ «WALLTEX EXPRESS LP» կազմակերպության հաշվից 2013 թվականի մայիսի 6-ին կանխիկացված 1.250.000 դոլար գումարից 1.000.000 դոլարը նույն օրը մուտքագրվել է «MLRE LTD» ընկերության հաշվին: Դրանից հետո, ոչ ռեզիդենտ «ART JAN LIMITED» կազմակերպությունից 2013 թվականի հունիսի 3-ին և ոչ ռեզիդենտ «PORTO VIA LP» կազմակերպությունից 2013 թվականի հունիսի 6-ին «MLRE LTD» ընկերության հաշվին փոխանցվել է յուրաքանչյուր կազմակերպությունից 3.000.000 եվրո՝ ընդհանուր 6.000.000 եվրո: «MLRE LTD»

ընկերության հաշվին փոխանցված հանցավոր ծագում ունեցող վերը նշված գումարները միաստունվել են ընկերության հաշվին եղած հանցավոր ծագում ունեցող գումարներին, որից հետո «MLRE LTD» ընկերության կողմից 2013 թվականի հունիսի 21-ից մինչև 2014 թվականի հունվարի 29-ն ընկած ժամանակահատվածում «Շին Տավր» ՍՊ ընկերության հաշվին փոխանցվել է առնվազն 3.124.800.000 ՀՀ դրամ՝ «կանոնադրական կապիտալի ներդրում» նպատակով: Արդյունքում «MLRE LTD» ընկերությունը դարձել է «Շին Տավր» ՍՊ ընկերության բաժնետերեր՝ 30 տոկոսի չափով: Միաժամանակ, 2013 թվականի սեպտեմբերի 27-ին տեղի ունեցած՝ «Շին Տավր» ՍՊ ընկերության մասնակիցների ժողովի ընթացքում Մ.Մ-ի և Լ.Ա-ի մերերիմ, վերջիններիս պարկանող մի շարք ընկերությունների աշխատակից և հանցավոր կազմակերպության մասնակից Վազրիկ Սեկոյանը նշանակվել է ընկերության տնօրեն:

Շարունակելով հանցավոր ծագում ունեցող գույքի փոխանցման գործընթացը, գործարքներին օրինական քաղաքացիաիրավական տեսք հաղորդելու նպատակով, արդեն իսկ հանցավոր ճանապարհով ձեռք բերված «Երևան Մոլ» ՍՊ ընկերության 30 տոկոս բաժնեմասերի իրական պարկանելությունը թաքցնելու նպատակով, Մ.Մ-ի, Ա.Հ-ի, Լ.Ա-ի, Արշակ Պողոսյանի և Վազրիկ Սեկոյանի միջև ձեռք բերված հանցավոր համաձայնությամբ, 2019 թվականի հունվարի 15-ին «MLRE LTD» ընկերությունը՝ ի դեմս լիազորված անձ Արշակ Պողոսյանի, և Վազրիկ Սեկոյանը կնքել են բաժնեմասերի ստույգաձևի ձևական պայմանագիր, որով «MLRE LTD» ընկերությունն իրեն պարկանող՝ «Երևան Մոլ» ՍՊ ընկերության կանոնադրական կապիտալի 30 տոկոսը կազմող 30 բաժնեմասերն իբրև 3.200.000.000 ՀՀ դրամով ամբողջությամբ վաճառել է Վազրիկ Սեկոյանին՝ այդ կերպ վերջնարդյունքում օրինականացնելով հանցավոր ճանապարհով ստացված՝ առանձնապես խոշոր չափերով գումարները:

Այսպիսով, Մ.Մ-ն, Ա.Հ-ն և Լ.Ա-ն Արշակ Պողոսյանի և Վազրիկ Սեկոյանի հետ հանցավոր կազմակերպության կազմում, հանցավոր ճանապարհով ձեռք բերված գումարներից 3.124.800.000 ՀՀ դրամի ծագման աղբյուրը, տեղաշարժը տարբեր պայմանագրերի ներքո քողարկելով, գումարի պարկանելությունը թաքցնելով և խեղաթյուրելով, այն շրջանառվել է «MAM CAPITAL Inc», «SPENSER INDUSTRIAL LP», «WALLTEX EXPRESS LP», «MLRE LTD» կազմակերպությունների հաշվեհամարների միջոցով ու վերջնարդյունքում առնվազն 3.124.800.000 ՀՀ դրամ փոխանցվել է «Շին Տավր» ՍՊ ընկերությանը՝ նշված եղանակով վճարվելով ընկերության բաժնեմասերի արժեքը, իսկ հետագայում Արշակ Պողոսյանը փոխանցել, իսկ Վազրիկ Սեկոյանը ձեռք է բերել հանցավոր ճանապարհով ստացված՝ արդեն իսկ «Երևան Մոլ» անվանումը կրող ՍՊ ընկերության բաժնեմասերը՝ թաքցնելով ընկերության բաժնետոմսերի իրական պարկանելությունը:

Այսինքն, Արշակ Պողոսյանին մեղսագրվում է ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով նախատեսված հանցանքի

կապարում (համապատասխանում է ՀՀ գործող քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 3-րդ մասի 3-րդ կետին):

Բացի այդ, Մ.Մ-ն Լ.Ա-ի, Ռ.Ս-ի, Մ.Վ-ի, Տ.Ե-ի, Արշակ Պողոսյանի, Ա.Պ-ի հետ համարել հանցավոր կազմակերպության կազմում, Գ.Հ-ի հետ նախնական համաձայնությամբ, Ա.Զ-ի, Օ.Ա-ի և Ս.Ա-ի օժանդակությամբ, իրավաբանական անձ սրեղծելու և այն օգտագործելու միջոցով իրականացրել են ապօրինի գործունեություն, որի նպատակն է նյութական այլ օգուրներ քաղելը և արգելված գործունեությունը թաքցնելը՝ պետությանը պարճառելով առանձնապես խոշոր չափերի գույքային վնաս:

Մ.Մ-ն և Լ.Ա-ն, նպատակ ունենալով իրավաբանական անձ սրեղծելու և այն օգտագործելու միջոցով ապօրինի գործունեություն իրականացնելով քաղել նյութական օգուրներ, թաքցնել արգելված գործունեությունը՝ Մ.Մ-ին պատկանող մի շարք ընկերությունների (այդ թվում՝ օՖշորային) աշխատակից և լիազորված անձ Ռ.Ս-ի, Մ.Մ-ին պատկանող «ԷՅՓԻ Ընդ Էս Քոնսալթինգ» ՍՊ ընկերության տնօրեն, «Օֆիս Կլաս» ՍՊ ընկերության տնօրեն, «Ադմոսֆեր Արմենիա» և «Ռադիոկոնսերտ» ՍՊ ընկերությունների տնօրեն հանդիսացած Մ.Վ-ի, «Ռոյալ Սթոնվելյը», «Կասպոնկո», «Քլար 96», «Հունիս», «Սերաֆիմ Քոնսալթինգ», «ԷՅՓԻ Ընդ Էս Քոնսալթինգ», «Պրես Սրենդ», «Սթորթրանս» և Լ.Ա-ին պատկանող «Սերաֆիմ Քոնսալթինգ» ՍՊ ընկերությունների տնօրեն հանդիսացած՝ Մ.Մ-ի ընկեր Տ.Ե-ի, Արշակ Պողոսյանի և Ա.Պ-ի հետ հանցավոր կազմակերպության կազմում, «Դիսթրիբյու» ՍՊ ընկերությունում, «ԷՅՓԻ Ընդ Էս Քոնսալթինգ» ՍՊ ընկերությունում տնօրենար հանդիսացած Գ.Հ-ի հետ նախնական համաձայնությամբ և համարել պայմանավորվել են՝ սրեղծել իրավաբանական անձ, ղեկավարել դրա ապօրինի գործունեությունը, այն օգտագործելու միջոցով խուսափել հարկերից, քաղել նյութական օգուրներ և թաքցնել արգելված գործունեությունը:

Ձեռք բերված հանցավոր համաձայնության շրջանակներում Մ.Մ-ն և Լ.Ա-ն 2013 թվականի փետրվարի 14-ին հիմնադրել են «SAMTELL LP» կազմակերպությունը և գրանցել այն Շոտլանդիայի Էդինբուրգ քաղաքում: Ընկերության պատկանելությունը և գործունեության իրական բնույթը քողարկելու նպատակով դրա սեփականատերեր են գրանցվել Բելիզում գրանցված՝ «Հոկայդո Ինվեստ» և «Օկինավա Հոլդինգ» բաժնետիրական ընկերությունները: Ընկերությունը հիմնադրելուց հետո, Ռ.Ս-ի միջոցով՝ վերջինիս կողմից լիազորագրեր պատրաստելով, որպես դրա լիազորված անձինք, գրանցվել են Մ.Վ-ն, հետագայում՝ Գ.Հ-ն, իսկ ընկերության ֆինանսական հարցերով զբաղվել է Տ.Ե-ն, ով հանցավոր կազմակերպության մի շարք անդամների հետ համարել, տնօրինել է ընկերության ֆինանսական հոսքերը և դրանց հետագա օգտագործումը:

Նշված ընկերությունը սրեղծելուց հետո Մ.Մ-ն, հանդիսանալով պաշտոնապես անձ՝ 2013 թվականի մարտի 9-ից **** *
**** *, 2014 թվականից՝ **** *
**** *,

օգտագործելով իր իշխանական լիազորություններով պայմանավորված ազդեցությունը, ինչպես նաև ** * * * * * լինելու գործոնն ու դրանով պայմանավորված ազդեցությունը, Լ.Ա-ի հետ Հայաստանի Հանրապետությունում գործող մի շարք ընկերությունների՝ ՀՀ-ում խոշորագույն տպարան «Էյ Էմ Փի Ջի Գրուպ» ՍՊ ընկերության, «Ալեքս-Գրիգ» ՍՊ ընկերության, Սոթքի ոսկու հանքավայրը շահագործող «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊ ընկերության, վերջինիս կողմից շահագործվող «Ագարակի ՊՄԿՄ» ՍՊ ընկերության, «Գոլդեն Օրեն» ՍՊ ընկերության, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության, «Մաքուր Երկաթի գործարան» ԲԲ ընկերության ղեկավարների հետ ձեռք են բերել փոխադարձ համաձայնություն՝ փաստացի գործունեություն չիրականացնող «SAMTELL LP» կազմակերպության հետ կնքել ձևական բնույթ կրող պայմանագրեր, այդ պայմանագրերի հիման վրա «SAMTELL LP» կազմակերպության հայաստանյան հաշվեհամարին մրացածին նպատակներով՝ «կանխավճար խորհրդարվության համար», «համաձայն վճարովի ծառայությունների պայմանագրի», «հանքավանի պղնձամոլիբդենային հանքավայրի պաշարների հորմոնիզացման աշխատանքների համար» և այլ նպատակներով փոխանցել առանձնապես խոշոր չափերի գումարներ՝ հետագայում փողերի լվացում կատարելու, «SAMTELL LP» կազմակերպության ու նշված ընկերությունների միջև կնքված քաղաքացիաիրավական պայմանագրերի միջոցով նշված գումարներին օրինական քաղաքացիաիրավական տեսք հաղորդելու և «SAMTELL LP» կազմակերպությունն օգտագործելու միջոցով ձեռք բերված հիշյալ գումարներն այլ գործունեության մեջ ներդնելու նպատակով: Վերը նշված ՀՀ ռեզիդենտ ընկերությունների ղեկավարների հետ պայմանավորվածության շրջանակներում Մ.Մ-ն պատրաստակամություն է հայտնել նաև շահադիտական նպատակներով իրեն պատկանող «SAMTELL LP» կազմակերպությանը՝ ի դեմս դրա ներկայացուցիչների, առանձնապես խոշոր չափերով ապօրինի վարձարրություն ստանալու դիմաց, օգտագործել իր իրական՝ * * * * *

*, * * * * *, * * * * *

լինելու գործոնն ու դրանցով պայմանավորված ազդեցությունը՝ հիշյալ ընկերությունների օգտին ՀՀ ՊԵԿ պաշտոնապար անձանց, ինչպես նաև այդ ընկերությունների կողմից պատշաճ և անխոչընդոտ գործունեություն իրականացնելու նպատակով համապատասխան լիցենզիաներ տրամադրող իրավասու պաշտոնապար անձանց կողմից իրենց լիազորությունների շրջանակներում նշված ընկերությունների շահերից չբխող գործողություններ չկատարելուն նպաստելու, ինչպես նաև իր իրական ազդեցության ներքո գրնվող այլ պաշտոնապար անձանց կողմից ծառայության գծով հովանավորչության կամ թողութվության համար: Իրենց հերթին՝ նշված ընկերությունների ղեկավարները պատրաստակամություն են հայտնել՝ ապօրինի գործունեություն իրականացնելու համար սրեղծված «SAMTELL LP» կազմակերպությանը տրամադրել առանձնապես խոշոր չափերով ապօրինի վարձարրություն, իսկ նշված գումարների հանցավոր

ծագումը թաքցնելու և խեղաթյուրելու, հերազայում Մ.Մ-ի կողմից իր կատարած հանցանքների համար պատասխանատվությունից խուսափելուն օժանդակելու նպատակով «SAMTELL LP» կազմակերպության ներկայացուցիչների հետ կնքել են իրականությանը չհամապատասխանող ծառայությունների մատուցման ձևական պայմանագրեր՝ այդ կերպ օրինական քաղաքացիաիրավական գործարքներից բխող պարտավորությունների կատարման եղանակով քողարկելով Մ.Մ-ին առանձնապես խոշոր չափերով ապօրինի վարձատրություն տալու հանգամանքը:

Միաժամանակ, ձևական պայմանագրեր են կնքվել նաև Մ.Մ-ին փաստացի պարկանող ընկերությունների՝ «SAMTELL LP» կազմակերպության և «Արմենիան Մայնինգ Քոնսերպթոր» ՍՊ ընկերության, «SAMTELL LP» կազմակերպության և «METCORP MANAGEMENT DMCC LIMITED» խոշոր շինարարական և նավթամարդյունահանող կազմակերպության, Մ.Մ-ի՝ ընկերոջը՝ Ա.Զ-ին պարկանող «TCT UNIVERSAL LTD» կազմակերպության, այլ՝ «Pontos Energy Limited» ընկերության միջև, ինչպես նաև «SAMTELL LP» կազմակերպության հաշվեհամարին Տ.Ե-ի, Մ.Վ-ի, Գ.Հ-ի և Ա.Պ-ի կողմից կանխիկ մուրքագրվել են առանձնապես խոշոր չափերով գումարներ:

Մասնավորապես, ձեռք բերված համաձայնությունների շրջանակներում 2013 թվականին «Գոլդեն Օրեն» ՍՊ ընկերության՝ ի դեմս տնօրեն Զ.Թ-ի և «SAMTELL LP» կազմակերպության միջև՝ ի դեմս տնօրեն Մ.Վ-ի, կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր: Պայմանագրի առարկան հանդիսացել է ՀՀ-ում Հանքավանի պղնձամոլիբդենային հանքավայրի պաշարների հաշվարկման դասական մեթոդիկայի հարմոնիզացման աշխատանքները, ինչպես նաև հաշվեքվության ներկայացումը JORC միջազգային օրենսգրքի համաձայն, ելակետային տվյալների հիման վրա (երկրաբանական նյութեր), ժամանակակից սարքավորումների և մեթոդների առավելագույն կիրառմամբ: Պայմանագրով պարտավորվում է «Գոլդեն Օրեն» ՍՊ ընկերությունը պարտավորվել է կատարողին վճարել 102.000.000 ՀՀ դրամ՝ վերջինիս «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության
***** հաշվին: Արդյունքում՝ նախապես ձեռք բերված պայմանավորվածության համաձայն՝ պայմանագրով սահմանված պարտավորությունները «SAMTELL LP» կազմակերպության կողմից չեն կատարվել և 2013 թվականի հոկտեմբերի 17-ին «Գոլդեն Օրեն» ՍՊ ընկերությունից «SAMTELL LP» կազմակերպության հաշվեհամարին փոխանցվել է ապօրինի վարձատրություն հանդիսացող 81.600.000 ՀՀ դրամ:

2013 թվականի հոկտեմբերի 30-ին «SAMTELL LP» կազմակերպության՝ ի դեմս տնօրեն Մ.Վ-ի և «Ագարակի ՊՄԿՄ» ՓԲ ընկերության՝ ի դեմս տնօրեն Ա.Պ-ի միջև կնքվել է խորհրդարկական վճարովի ծառայություններ մատուցելու վերաբերյալ ձևական պայմանագիր, որի համաձայն՝ «SAMTELL LP» կազմակերպությունը պետք է կատարեր պղնձի և մոլիբդենի խարանյութերի միջազգային շուկաների ուսումնասիրություն՝ առավել ձեռնարկ պայմաններով գնորդների հայրնաբերման նպատակով՝ 140.000.000 ՀՀ դրամ արժեքով: Արդյունքում՝ առանց պայմանագրով

սահմանված աշխատանքները կատարելու, 2014 թվականի հուլիսի 31-ին «SAMTELL LP» կազմակերպության փնտրեն Գ.Հ-ի և «Ագարակի ՊՄԿՄ» ՓԲ ընկերության փնտրեն Ս.Պ-ի կողմից կազմվել է կեղծ փաստաթուղթ՝ ակտ այն մասին, որ պայմանագրով նախատեսված ուսումնասիրությունը կատարողի կողմից համարվում է կատարված, որի արդյունքում կատարողը պարվիրարություն է ներկայացրել իրականացված ուսումնասիրության վերաբերյալ կեղծ հաշվետվություն, ինչի հիման վրա «SAMTELL LP» կազմակերպության «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության ***** հաշվեհամարին 2013 թվականի նոյեմբերի 7-ին փոխանցվել է ապօրինի վարձարություն՝ հանդիսացող 140.000.000 ՀՀ դրամ:

2017 թվականի հուլիսի 4-ին լուծարված «Ալես Գրիգ» ՍՊ ընկերությունից՝ ի դեմս հիմնադիր և փնտրեն Մ.Ղ-ի, 2013 թվականի սեպտեմբերի 17-ին, հոկտեմբերի 10-ին, նոյեմբերի 11-ին, 2014 թվականի հունվարի 20-ին, մարտի 3-ին, 2015 թվականի մարտի 2-ին, ապրիլի 3-ին, մայիսի 4-ին, հունիսի 2-ին, հուլիսի 2-ին, հուլիսի 17-ին, սեպտեմբերի 2-ին, հոկտեմբերի 1-ին, նոյեմբերի 3-ին, դեկտեմբերի 2-ին, 2016 թվականի հունվարի 15-ին, փետրվարի 3-ին, մարտի 3-ին, առանց «SAMTELL LP» կազմակերպության հետ կատարված գործարքների վերաբերյալ դուրս գրված հաշիվների, վերջինիս հաշվեհամարին փոխանցվել է ապօրինի վարձարություն հանդիսացող, համապատասխանաբար՝ 100.000.000, 50.000.000, 50.000.000, 50.000.000, 200.000.000, 100.000.000, 300.000.000, 100.000.000, 150.000.000, 150.000.000, 150.000.000, 100.000.000, 100.000.000, 100.000.000, 100.000.000, 50.000.000 ՀՀ դրամ, ընդհանուր՝ 2.000.000.000 ՀՀ դրամ:

«Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊ ընկերության՝ ի դեմս փնտրեն Վ.Կ-ի և «SAMTELL LP» կազմակերպության միջև՝ ի դեմս փնտրեն Գ.Հ-ի, 2013 թվականի հոկտեմբերի 16-ից մինչև 2014 թվականի դեկտեմբերի 24-ը ձևակերպվել են կեղծ գործարքներ, և, առանց «SAMTELL LP» կազմակերպության կողմից որևէ պարտավորություն կատարելու, «Գեոպրոմայնինգ Գոլդ» ՍՊ ընկերությունից 2013 թվականի հոկտեմբերի 16-ին 9 փոխանցումներով ընդհանուր 919.000.000 ՀՀ դրամ, 2014 թվականի ապրիլի 17-ին և դեկտեմբերի 24-ին համապատասխանաբար՝ 80.000.000 և 500.000.000 ՀՀ դրամ, ապօրինի վարձարություն հանդիսացող գումարները փոխանցվել են «SAMTELL LP» կազմակերպության ***** հաշվին:

«ԷլէմՓիՋի Գրուպ» ՓԲ ընկերության՝ ի դեմս փնտրեն Ա.Թ-ի և «SAMTELL LP» կազմակերպության՝ ի դեմս փնտրեն Գ.Հ-ի միջև 2014-2016 թվականներին կնքվել են ծառայությունների մատուցման կեղծ, ձևական պայմանագրեր, որոնց համաձայն՝ ընկերությունը «SAMTELL LP» կազմակերպությունից ձեռք է բերել 2Գ/Սկան կողեր: Այնինչ, «SAMTELL LP» կազմակերպության կողմից պայմանագրերով սրանձնած պարտավորությունները փաստացի կատարված չլինելու պայմաններում «ԷլէմՓիՋի Գրուպ» ՓԲ ընկերությունը՝ ի դեմս փնտրեն Ա.Թ-ի, 2014 թվականի օգոստոսի 6-ից մինչև 2016 թվականի օգոստոսի 2-ը «SAMTELL LP» կազմակերպությանը փոխանցել է ապօրինի վարձարություն հանդիսացող

5.680.826 ԱՄՆ դոլարը՝ 2014 թվականի օգոստոսի 6-ին, սեպտեմբերի 26-ին, հոկտեմբերի 7-ին, նոյեմբերի 25-ին, 2015 թվականի մայիսի 26-ին, օգոստոսի 11-ին, 2016 թվականի հուլիսի 4-ին և օգոստոսի 2-ին համապատասխանաբար՝ 757.500, 549.000, 565.187, 608.887, 1.110.257, 1.103.633, 493.181 և 493.181 դոլար:

Բացի այդ, 2014 թվականի դեկտեմբերի 1-ին «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության և «SAMTELL LP» կազմակերպության միջև կնքվել է խորհրդարկական ծառայությունների մատուցման պայմանագիր, որով կատարող «SAMTELL LP» կազմակերպությունը պարտավորվել է մատուցել հետևյալ ծառայությունները՝ պարվիրատուի վաճառքների և հասույթի կառուցվածքի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, համակարգում և վերլուծություն, պղնձի և մոլիբդենի վաճառքից հասույթի օպերիմիզացիայի ծրագրի մշակում և ներդրում, պղնձի և մոլիբդենի խորանյութերի արտադրության ծախսերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրում, համակարգում և վերլուծություն, վաճառքի օպերիմալ սխեմաների հասարակման նպատակով պոտենցիալ գնորդների հետ բանակցություններին աջակցում, շուկայում համագործակցության և ներդրումների շահավետ հնարավորությունների որոնում: Ծառայությունների մատուցումը փաստագրվել է 2015 թվականի նոյեմբերի 30-ին և 2016 թվականի նոյեմբերի 30-ին կազմված ակտերով, ինչպես նաև հաշիվ-ապրանքագրերով: Պայմանագրի արժեքը սահմանվել է 750.000.000 ՀՀ դրամ, որից 700.000.000 ՀՀ դրամը՝ որպես ապօրինի վարձատրություն, SAMTELL LP» կազմակերպությանը վճարվել է 2014 թվականի դեկտեմբերի 19-ին և 2015 թվականի օգոստոսի 3-ին:

2016 թվականի սեպտեմբերի 15-ին «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության և «SAMTELL LP» կազմակերպության միջև կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր, որով կատարող «SAMTELL LP» կազմակերպությունը պարտավորվել է մատուցել ծառայություններ՝ կորպորատիվ բանկինգի, ներդրումային բանկինգի/ֆինանսավորման, արժեթղթերի դիմաց ֆինանսավորման, սթրիմինգային գործարքների կնքման բնագավառներում: Պայմանագրի արժեքը սահմանվել է պայմանական՝ կորպորատիվ բանկինգի կամ ներդրումային բանկինգի և/կամ արժեթղթերի դիմաց ֆինանսավորման և/կամ սթրիմինգային գործարքի դեպքում՝ ներգրավված միջոցների 5 տոկոսի չափով, սթրիմինգային կանխավճարի 5 տոկոսի չափով: Ապօրինի վարձատրության առարկան պայմանագրի շրջանակներում 2017 թվականի հունվարի 1-ին կատարողին տրամադրվել է կանխավճարի տեսքով՝ 1.000.000 դոլարի չափով:

Պայմանագրով սահմանված ժամկետում պարվիրատուի պահանջներին բավարարող ծառայություններ, նախապես ձեռք բերված պայմանավորվածությամբ, չեն մատուցվել և վերջինիս կողմից չեն ընդունվել:

2018 թվականի մարտի 16-ին «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության և «SAMTELL LP» կազմակերպության միջև կնքվել է ծառայությունների մատուցման պայմանագիր, որով կատարող «SAMTELL LP»

կազմակերպությունը պարտավորվել է մատուցել պոչամբարի կայունության հետազոտությունների իրականացման, մոնիթորինգի համակարգի ներդրման, ենթակառուցվածքների օպերիմյալացման և հետագա զարգացման ծրագրերի մշակման ծառայություններ: Պայմանագրի արժեքը սահմանվել է 2.000.000 դոլար, որը պետք է վճարվեր պայմանագրով սահմանված ժամանակացույցին համապատասխան՝ 10 ամիսների ընթացքում՝ ամսական 200.000 դոլարի չափով: Նշված պայմանագրի հիման վրա 2018 թվականի մարտի 23-ին, ապրիլի 25-ին և մայիսի 25-ին կատարվել են վճարումներ SAMTELL LP» կազմակերպությանը, որից հետո վճարումները դադարեցվել են՝ իբր «ելնելով կատարողական ցածր մակարդակից»: Արդեն 2018 թվականի դեկտեմբեր ամսին, «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունը, արձանագրելով, որ նշված պայմանագրերի հիման վրա ծառայությունները պատշաճ կերպով չեն մատուցվել, ինչպես նաև հնարավոր չի եղել կապ հաստատել կատարողի ներկայացուցիչների հետ, դուրս է գրել նշված դերիտորական պարտավորությունները՝ հաշվի առնելով ընկերության գլխավոր հաշվապահի 2018 թվականի դեկտեմբերի 28-ի զեկուցագիրը:

Արդյունքում՝ «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունը առանց «SAMTELL LP» կազմակերպության կողմից պայմանագրերով սրանձնած պարտավորությունները կատարելու վերջինիս հաշվեհամարին 2014 թվականի դեկտեմբերի 19-ին, 2015 թվականի օգոստոսի 3-ին, 2017 թվականի հունվարի 18-ին, 2018 թվականի մարտի 23-ին, ապրիլի 25-ին, մայիսի 25-ին փոխանցել է ապօրինի վարձավրություն հանդիսացող գումարները, համապատասխանաբար՝ 600.000.000, 100.000.000 ՀՀ դրամ, 1.000.000 դոլար, 200.000 դոլար, 200.000 դոլար, 200.000 դոլար և հետագա փոխանցումները դադարեցրել է բացառապես ՀՀ-ում 2018 թվականի մայիս ամսվա իրադարձություններից հետո:

«Մաքուր Երկաթի Գործարան» ԲԲ ընկերության՝ ի դեմս տնօրեն Զ.Գ-ի, և «SAMTELL LP» կազմակերպության՝ ի դեմս տնօրեն Գ.Հ-ի միջև 2015 թվականին կնքվել է խորհրդարկական բնույթի ծառայությունների մատուցման պայմանագիր և, առանց «SAMTELL LP» կազմակերպության կողմից պայմանագրով սրանձնած պարտավորությունները կատարելու, 2015 թվականի հոկտեմբերի 19-ին «Մաքուր Երկաթի Գործարան» ԲԲ ընկերության կողմից «SAMTELL LP» կազմակերպության հաշվեհամարին է փոխանցվել ապօրինի վարձավրություն հանդիսացող 150.000.000 ՀՀ դրամ:

Շարունակելով «SAMTELL LP» կազմակերպության ապօրինի գործունեությունը՝ Մ.Մ-ին փաստացի պատկանող «Արմենիան Մայնինգ Բոնթրաքթոր» ՍՊ ընկերության տնօրեն Օ.Ա-ի կողմից նույն ընկերության հիմնադիր Ս.Ա-ի ցուցումով և «SAMTELL LP» կազմակերպության միջև՝ ի դեմս տնօրեն Գ.Հ-ի, 2015 թվականի դեկտեմբերի 29-ին կնքվել է ծառայությունների մատուցման ձևական պայմանագիր, ըստ որի՝ «SAMTELL LP» կազմակերպությունը

պարտավորվել է «Արմենիան Մայնինգ Բոնթրաքթոր» ՍՊ ընկերության համար հայտնաբերել ներդրողներ: Պայմանագրի արժեքը սահմանվել է 3.000.000 ԱՄՆ դոլար: Արդյունքում՝ «SAMTELL LP» կազմակերպության կողմից առանց պայմանագրով սրանձնած պարտավորությունը կատարելու, 2016 թվականի ապրիլի 21-ին՝ 2 փոխանցումով, հունիսի 27-ին, հուլիսի 27-ին, հուլիսի 28-ին և հոկտեմբերի 21-ին «SAMTELL LP» կազմակերպության հաշվեհամարին փոխանցվել է համապատասխանաբար 291.500.000, 190.000.000, 130.000.000, 174.000.000, 175.000.000, 475.300.000 ՀՀ դրամ:

Բացի այդ, 2014 թվականի հունվարի 22-ին կրկին ձևական պայմանագրի հիման վրա Մ.Մ-ի հետ փոխկապակցված «METCORP MANAGEMENT DMCC LIMITED» կազմակերպությունից «SAMTELL LP» կազմակերպությանն է փոխանցվել շուրջ 2.449.980 ԱՄՆ դոլար՝ «կանխավճարի տրամադրում» նպատակով:

Բացի այդ, ձևական փոխառության պայմանագրերի հիման վրա 2018 թվականի փետրվարի 15-ին ՌԴ-ից՝ Մ.Մ-ի ընկերոջը՝ Ա.Զ-ին պատկանող «TCT UNIVERSAL LTD» կազմակերպությունից «համաձայն փոխառության պայմանագրի» նպատակով «SAMTELL LP» կազմակերպությանը փոխանցվել է 952.281.184 ՌԴ ռուբլի, նույն թվականի ապրիլի 10-ին ձևական փոխառության պայմանագրի հիման վրա ՌԴ-ից՝ «PONTOS ENERGY LIMITED» ընկերությունից «փոխառության տրամադրում» նպատակով «SAMTELL LP» կազմակերպությանը փոխանցվել է 334.400 դոլար:

Փաստացի օրինական գործունեություն չիրականացնող «SAMTELL LP» կազմակերպության հաշվեհամարին առկա մնացած գումարները գոյացել են Մ.Վ-ի կողմից 2013 թվականի օգոստոսի 8-ից մինչև 2014 թվականի ապրիլի 4-ն ընդհանուր 1.830.000 ԱՄՆ դոլար կանխիկ մուտքագրելու, Գ.Հ-ի կողմից 2015 թվականի օգոստոսի 5-ից մինչև 2018 թվականի փետրվարի 2-ը 1.744.900 ՀՀ դրամ, 2016 թվականի հոկտեմբերի 12-ին՝ 900.000 ԱՄՆ դոլար, 2017 թվականի հունվարի 12-ին՝ 1.700 եվրո կանխիկ մուտքագրելու և Ա.Պ-ի կողմից 2016 թվականի սեպտեմբերի 29-ին՝ 94 960.000 ՀՀ դրամ կանխիկ մուտքագրելու միջոցով:

Արդյունքում՝ ապօրինի գործունեություն իրականացնող «SAMTELL LP» կազմակերպության հայաստանյան հաշիվը համալրվել է 6.103.104.900 ՀՀ դրամ, 12.795. 206 ԱՄՆ դոլար, 952.281.184 ՌԴ ռուբլի և 1.700 եվրո գումարով, որից մի մասը ՀՀ ռեզիդենտ, վերը նշված ընկերությունների կողմից փոխանցելու միջոցով, իսկ մնացածը՝ կանխիկ մուտքագրելու և ՀՀ ոչ ռեզիդենտ ընկերությունների կողմից փոխանցումների միջոցով:

Արդյունքում՝ «SAMTELL LP» իրավաբանական անձը սրեղծելու և այն օգտագործելու միջոցով իրականացվել է ապօրինի գործունեություն, որի նպատակն է եղել նյութական այլ օգուտներ քաղելը և արգելված գործունեությունը թաքցնելը, ինչի արդյունքում պետությանը պատճառվել է նշված գործունեության արդյունքում ՀՀ ռեզիդենտ ընկերությունների կողմից չվճարված հարկերի տեսքով՝ առանձնապես խոշոր չափերով՝ 1.504.382.706 ՀՀ դրամի վնաս:

Հանցավոր ճանապարհով՝ ապօրինի գործունեություն իրականացնելու նպատակով սրեղծված իրավաբանական անձն օգտագործելու միջոցով և ապօրինի վարձարրության արդյունքում առանձնապես խոշոր չափերով՝ 6.103.104.900 ՀՀ դրամ, 12.795.206 ԱՄՆ դոլար, 952.281.184 ՌԴ ռուբլի և 1.700 եվրո գումարը ձեռք բերելուց հետո Մ.Մ-ն, հանցավոր կազմակերպության կազմում և մի խումբ անձանց հետ նախնական համաձայնությամբ, կատարել է փողերի լվացում՝ փոխանցել, ձեռք է բերել և օգտագործել, փաստացի տիրապետել և տնօրինել է հանցավոր ճանապարհով սրացված առանձնապես խոշոր չափերի գույք, որը նպատակ է ունեցել թաքցնել և խեղաթյուրել այդ գույքի հանցավոր ծագումը, պատկանելությունը, գույքի իրական բնույթը և ծագման աղբյուրը:

Մասնավորապես, ձեռք բերված նախնական համաձայնության շրջանակներում 2013-2018 թվականների ընթացքում 6.103.104.900 ՀՀ դրամ, 12.795.206 ԱՄՆ դոլար, 952.281.184 ՌԴ ռուբլի և 1.700 եվրո գումարից 6.282.138.906 ՀՀ դրամը և 4.574.380 ԱՄՆ դոլարը կանխիկ ելքագրվել է Գ.Հ-ի կողմից, 1.880.252.000 ՀՀ դրամը, 3.050.000 ԱՄՆ դոլարը՝ Մ.Վ-ի կողմից, 100.000.000 ՀՀ դրամը՝ Արշակ Պողոսյանի կողմից, իսկ 80.000.000 ՀՀ դրամը՝ Մ.Մ-ի և Լ.Ա-ի հետ փոխկապակցված «Առնեֆտ Արմենիա» ՓԲ ընկերության տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի պետ Պ.Դ-ի կողմից:

Միաժամանակ, «SAMTELL LP» կազմակերպության անօրինական գործունեությանը զուգահեռ, Մ.Մ-ն հանցավոր կազմակերպության մյուս ղեկավար Լ.Ա-ի, հանցավոր կազմակերպության մասնակիցներ Տ.Ե-ի, Ա.Մ-ի և Բ.Ս-ի հետ համատեղ պայմանավորվել են օրարերկրյա իրավաբանական անձի հետ հիմնադրել ՍՊ ընկերություն, ավելի քան 30.000.000 դոլար ներդնելով *****

/ հասցեում կառուցել հյուրանոց, իսկ հյուրանոցի կառուցման նպատակով ներդնել հանցավոր ճանապարհով սրացված գումարներ՝ նպատակ ունենալով՝ թաքցնել և խեղաթյուրել այդ գումարների հանցավոր ծագումը, պատկանելությունը, գույքի իրական բնույթը և ծագման աղբյուրը:

Հանցավոր համաձայնության շրջանակներում 2013 թվականի մարտի 18-ին Տ.Ե-ն օրարերկրյա իրավաբանական անձ «Նուովո Վելոդրոմո» ՍՊ ընկերության հետ համատեղ Հայաստանի Հանրապետությունում (հիմնադիրն է հանդիսանում «Աենկո Վալորե» ընկերությունը) հիմնադրել են «Վելոֆիրմա» ՍՊ ընկերությունը, որի բաժնետերեր են գրանցվել Տ.Ե-ն՝ 80 տոկոսի չափով, «Նուովո Վելոդրոմո» ՍՊ ընկերությունը՝ 20 տոկոսի չափով: 2013 թվականի օգոստոսի 28-ին Տ.Ե-ն իր բաժնեմասերի 79 տոկոսը ձևական պայմանագրով վաճառել է «Նուովո Վելոդրոմո» ՍՊ ընկերությանը, իսկ 1 տոկոսը՝ «Արմենիա Զեսրիոնե» ՍՊ ընկերությանը: Նույն թվականի նոյեմբերի 26-ին «Նուովո Վելոդրոմո» ՍՊ ընկերությունն իր բաժնեմասերի 15 տոկոսը վաճառել է փաստացի Մ.Մ-ին պատկանող, նրա մերերիմ Բ.Ս-ի կողմից հիմնադրված՝ իբրև ֆինանսական միջնորդությամբ զբաղվող «Տաշտուն Մեթալգ» ՓԲ ընկերությանը: Նույն օրն «Արմենիա Զեսրիոնե» ՍՊ ընկերությունն իր 1 տոկոս բաժնեմասը վաճառել է

«Նուովո Վելոդորմո» ՍՊ ընկերությանը: 2015 թվականի հունվարի 29-ին Նուովո Վելոդորմո» ՍՊ ընկերությունն իր բաժնեմասերի 15 տոկոսը, 2016 թվականի հուլիսի 15-ին՝ 11.9 տոկոսը և 2016 թվականի հուլիսի 15-ին՝ 4.4 տոկոսը վաճառել է «Տաշտուն Մեթալզ» ՓԲ ընկերությանը: Արդյունքում՝ «Վելոֆիրմա» ՍՊ ընկերության 53.7 տոկոս բաժնեմասը պարկանել է «Նուովո Վելոդորմո» ՍՊ ընկերությանը, 46.3 տոկոս բաժնեմասը՝ «Տաշտուն Մեթալզ» ՓԲ ընկերությանը: 2015 թվականի հուլիսի 18-ին տեղի է ունեցել «Վելոֆիրմա» ՍՊ ընկերությանը պարկանող «Double Tree by Hilton Hotel հյուրանոցի պաշտոնական բացումը:

2013-2016 թվականների ընթացքում «Վելոֆիրմա» ՍՊ ընկերության մասնակիցների, նրանց բաժնեմասերի փոփոխության գործընթացին զուգահեռ, նախապես ձեռք բերված հանցավոր համաձայնության շրջանակներում հանցավոր ճանապարհով՝ ապօրինի գործունեություն իրականացնելու նպատակով ստեղծված իրավաբանական անձ «SAMTELL LP» կազմակերպությունն օգտագործելու միջոցով ստացված՝ 2013 թվականի նոյեմբեր ամսին կանխիկացված 1.620.465.000 ՀՀ դրամը նույն ամսի 27-ին Արշակ Պողոսյանի կողմից կանխիկ մուրքագրվել է Մ.Մ-ին և Լ.Ա-ին փաստացի պարկանող «MLRE LTD» կազմակերպության հաշվին, որն իր հերթին ստացված միջոցները (1622.625.000 ՀՀ դրամ) նույն օրը փոխանցել է Մ.Մ-ին և Լ.Ա-ին փաստացի պարկանող «Տաշտուն Մեթալզ» ՓԲ ընկերությանը, իսկ վերջինս՝ «Վելոֆիրմա» ՍՊ ընկերությանը (1.622.000.000 ՀՀ դրամ)՝ «համաձայն ֆինանսական օգնության տրամադրման պայմանագրի» նպատակով: 2014-2016 թվականներին «SAMTELL LP» կազմակերպության կողմից կանխիկացված գումարներից շուրջ 4.590.275.450 ՀՀ դրամը նախ փոխանցվել է Մ.Մ-ին և Լ.Ա-ին փաստացի պարկանող մի շարք ընկերությունների գլխավոր հաշվապահ՝ հանցավոր կազմակերպության մասնակից Ա.Մ-ին, որն իր հերթին, ստացված միջոցները միախառնելով իր մոտ գրնվող՝ հանցավոր ծագում ունեցող 2.994.366.250 ՀՀ դրամ գումարի հետ, ընդհանուր՝ 7.584.641.700 ՀՀ դրամը կանխիկ մուրքագրմամբ փոխանցել է «Տաշտուն Մեթալզ» ՓԲ ընկերության հաշվին: «Տաշտուն Մեթալզ» ՓԲ ընկերությունը՝ ի դեմս հիմնադիր և տնօրեն Բ.Ս-ի, գլխավոր հաշվապահ Ա.Մ-ի, իր հերթին ստացված միջոցները միախառնելով «Տաշտուն Մեթալզ» ՓԲ ընկերության հաշվին ստացված՝ վերջինիս օրինական գործունեությամբ չհիմնավորվող և հանցավոր ծագում ունեցող մյուս գումարների հետ, 2013 թվականի նոյեմբերի 27-ից մինչև 2016 թվականի նոյեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում, ընդհանուր 11.154.994.200 ՀՀ դրամ փոխանցել է «Վելոֆիրմա» ՍՊ ընկերության՝ «Ամերիաբանկ» ՓԲ ընկերության
***** հաշվին՝ «Համաձայն ֆինանսական օգնության՝ տրամադրման պայմանագրի առ 01.11.2013», որն էլ նշված միջոցները հիմնականում փոխանցել է «Ռենկո Արմէսթեյթ» ՍՊ ընկերությանը՝ «Համաձայն պայմանագրի առ 04.10.2013թ. Շինարարական աշխատանքների դիմաց») նպատակով:

Նույն ժամանակահատվածում հանցավոր կազմակերպության ղեկավար Լ.Ա-ն, մասնակիցներ Տ.Ե-ը, Ա.Մ-ն և Բ.Ս-ն ֆինանսական հիշյալ գործառնությունների

վերաբերյալ փեղեկավորություն են փոխանցել Մ.Մ-ին, այդ թվում՝ հյուրանոցի շինարարության նպատակով գումարներ ներդնելու, ներդրված գումարը 9 տարվա ընթացքում շահույթի տեսքով վերադարձնելու, հյուրանոցի գործունեության ծախսերի և եկամուտների հաշվարկման վերաբերյալ, ընկերության համար կնիք պատվիրելու, բանկում հաշիվներ բացելու վերաբերյալ:

Այսպիսով, շոտլանդական «SAMTELL LP» կազմակերպության հաշվեհամարին 2013-2018 թվականների ընթացքում տարբեր ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ընկերությունների կողմից փոխանցված, ինչպես նաև Մ.Մ-ի հետ փոխկապակցված ֆիզիկական անձանց կողմից իրականացված կանխիկ մուրքագրման գործարքների արդյունքում գոյացած առանձնապես խոշոր չափերով՝ 6.103.104.900 ՀՀ դրամ, 12.795,206 ԱՄՆ դոլար, 952.281.184 ՌԴ ռուբլի և 1.700 եվրո գումարները, նույն ժամանակահատվածում գրեթե ամբողջությամբ կանխիկացվել են Մ.Մ-ի հետ փոխկապակցված անձանց՝ այդ թվում Արշակ Պողոսյանի կողմից, դրանց մի մասը կանխիկ մուրքագրվել և միախառնվել է Մ.Մ-ի հետ փոխկապակցվածություն ունեցող մի շարք ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ կազմակերպությունների, մասնավորապես՝ «Double Tree by Hilton» հյուրանոցի բաժնեյեր «Տաշտուն Մեթալզ», ինչպես նաև «Երևան Մոլ» առևտրի կենտրոնի բաժնեյեր՝ արտասահմանյան «MLRE LTD» կազմակերպության ֆինանսական միջոցներին: «Տաշտուն Մեթալզ» ՓԲ ընկերությունը՝ ի դեմս հիմնադիր և փնթեյն Բ.Ս-ի, գլխավոր հաշվապահ Ա.Ս-ի, իր հերթին ստացված միջոցները միախառնելով «Տաշտուն Մեթալզ» ՓԲ ընկերության հաշվին ստացված՝ վերջինիս օրինական գործունեությամբ չհիմնավորվող և հանցավոր ծագում ունեցող մյուս գումարների հետ, 11.154.994.200 ՀՀ դրամ ներդրել է «Վելոֆիրմա» ՍՊ ընկերությունում՝ վերջնարդյունքում օրինականացնելով հանցավոր ծագում ունեցող առանձնապես խոշոր չափերով գումարները (...):²:

7. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի օգոստոսի 26-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) Անդրադառնալով սույն վարույթի փաստական հանգամանքներին՝ Դատարանն արձանագրում է, որ մեղադրյալներ Վազրիկ Սեկոյանի և Արշակ Պողոսյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել ի թիվս այլնի այն բանի համար, որ նրանք մասնակցել են «(...) Մ.Մ-ի և Լ.Ա-ի կողմից սրեղծված և ղեկավարած հանցավոր կազմակերպությանը և դրա կազմում կատարել առանձնապես խոշոր չափերով փողերի լվացում (...):»:

Վազրիկ Սեկոյանի և Արշակ Պողոսյանի վերաբերյալ թիվ ԵԴ1/0574/01/25 քրեական վարույթը (նախաքննական համարը 83171324) դեռևս նախաքննության փուլում անջարկվել է թիվ 83160718 կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթից և հաստատված մեղադրական եզրակացությամբ ուղարկվել քննության

² Տե՛ս քրեական վարույթ, հատոր 36, թերթեր 58-73:

Երևան քաղաքի առաջին արյանի ընդհանուր իրավասության քրեական դատարան:

Հարկ է նաև փաստել, որ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի, քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահների 2025 թվականի հուլիսի 14-ի թիվ ԵՊ/1548/01/25 (ՀԿԴ/0149/01/25) որոշմամբ քննարկվել է թիվ 83160718 կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթից անջարված և ընդհանուր իրավասության դատարան քննության ուղարկված մեկ այլ՝ Արամ Արմենի Մնացականյանի վերաբերյալ թիվ 83121825 քրեական վարույթի առարկայական ընդդատության հարցը:

Նշված որոշմամբ արձանագրվել է հետևյալը. «(...) պետք է փաստել, որ սույն գործի նյութերի, այդ թվում, մեղադրական եզրակացության ուսումնասիրությունից հետևում է, որ Արամ Մնացականյանի վերաբերյալ թիվ 83121825 քրեական վարույթն անջարվել է թիվ 83160718 կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթից, և վերջինին վերագրվում է Մ.Մ-ի և Լ.Ա-ի հետ նախնական համաձայնությամբ ենթադրյալ փողերի լվացում: Վերոգրյալից բխում է, որ Արամ Մնացականյանին ներկայացված մեղադրանքն անմիջականորեն կապված է Հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա հիշյալ կոռուպցիոն վարույթի հետ:

Հետևաբար, հաշվի առնելով արդարադատության շահը, այդ թվում՝ վարույթի պարզաճ և համակողմանի քննությունն ապահովելու անհրաժեշտությունը՝ զրնում ենք, որ սույն քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին (...)»:

Այսպիսով, Դատարանն արձանագրում է, որ ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահի, քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահների 2025 թվականի հուլիսի 14-ի թիվ ԵՊ/1548/01/25 (ՀԿԴ/0149/01/25) որոշմամբ քննարկվել է Վազրիկ Սեկոյանի և Արշակ Պողոսյանի վերաբերյալ թիվ ԵՊ/0574/01/25 քրեական վարույթի հետ անմիջականորեն առնչվող և նույնական փաստական տվյալներ ունեցող մեկ այլ վարույթի առարկայական ընդդատության հարցը և եզրահանգում է կարարվել, որ վարույթը ենթակա է քննության ՀՀ հակակոռուպցիոն դատարանում:

Հիմք ընդունելով վերոգրյալ վերլուծությունը՝ Դատարանը զրնում է, որ սույն քրեական վարույթի քննությունը Երևան քաղաքի առաջին արյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում անխուսափելիորեն կհանգեցնի մեղադրյալների արդար դատական քննության հիմնարար իրավունքի խախտման, իսկ արդյունքում կայացված դատական ակտը ցանկացած դեպքում ենթակա կլինի բեկանման:

Հետևաբար, անհրաժեշտ է թիվ ԵՊ/0574/01/25 քրեական վարույթն ըստ մեղադրանքի Վազրիկ Կարենի Սեկոյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 223-րդ հոդվածի 1-ին մասով և Արշակ Ռաֆայելի Պողոսյանի՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով՝ երկու

դրվագով, 189-րդ հոդվածի 1-ին մասով, 223-րդ հոդվածի 2-րդ մասով, ըստ ընդդատության ուղարկել ՀՀ հակակոռուպցիոն դատարան (...)³:

8. Հակակոռուպցիոն դատարանը 2025 թվականի սեպտեմբերի 3-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. «(...) Դատարանը նախ փաստում է, որ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի հավելված 6-ի և 2021 թվականի մայիսի 5-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի հավելված 1-ի համաձայն՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 189-րդ և 223-րդ հոդվածները նախատեսված չեն կոռուպցիոն հանցանքների գանկում:

Դատարանն արձանագրում է, որ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա են 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածով և 2021 թվականի մայիսի 05-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով սահմանված փողերի լվացման հանցակազմով միայն այն վարույթները, որոնցով քննության առարկա է հանդիսանում փողերի լվացման օբյեկտիվ կողմը կազմող արարքն իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կատարված ենթադրյալ հանցագործության դեպքը: Այսինքն՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի համադրությամբ փողերի լվացման դեպքով վարույթը ՀՀ հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա է բացառապես այն պարագայում, երբ հանցանքի օբյեկտիվ կողմը կազմող արարքը կամ դրա որևէ տարրը կատարվել են իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով: Այլ կերպ՝ վարույթի ընդդատության հարցը որոշելիս որևէ նշանակություն չունի, թե նախորդող (պրեդիկատ) հանցանքը բնութով կոռուպցիոն է, կատարվել է պաշտոնատար անձի կողմից, թե ոչ, այլ առանցքային է այն, թե արդյոք անմիջականորեն փողերի լվացմանն ուղղված՝ հանցակազմը սահմանավորող հոդվածով նկարագրված գործողությունները կատարվել են իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով:

Վերոշարադրյալի համադրությամբ Դատարանը հանգում է հետևության առ այն, որ բոլոր այն դեպքերում, երբ անմիջականորեն փողերի լվացմանն ուղղված՝ հանցակազմը սահմանող հոդվածով նկարագրված վերոշարադրյալ գործողությունները չեն կատարվել ծառայողական ենթակայության տակ չգրավող անձանց նկատմամբ սահմանված կարգով կարգադրիչ լիազորությունները կամ ծառայողական լիազորությունները կամ ծառայողական դիրքից բխող հեղինակությունն օգտագործելու եղանակով, 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածով և 2021 թվականի մայիսի 05-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով քննվող վարույթը ՀՀ հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա չէ՝ նույնիսկ այն դեպքերում, երբ

³ Տե՛ս քրեական վարույթ, հատոր 38, թերթեր 89-92:

հանցավոր ճանապարհով սրացված գույքը գոյացել է ՀՀ քրեական օրենսգրքի կոռուպցիոն հոդվածները սահմանող ցանկում ներառված որևէ կոռուպցիոն բնույթի հանցանքի կատարման արդյունքում:

Միևնույն ժամանակ Դատարանը փաստում է, որ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածով և 2021 թվականի մայիսի 05-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածով վարույթների ընդդատության հարցը որոշելիս էական նշանակություն ունի անձի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման փաստական նկարագրությունը, քանի որ այն իր մեջ պետք է ներառի և դրանում պետք է նկարագրվեն մեղսագրվող արարքի բոլոր հարկանիշները, հանցակազմի տարրերը, այն որակյալ դարձնող յուրաքանչյուր հանգամանքը:

Վերոշարադրյալի համարեքստում Դատարանը փաստում է, որ ինչպես Վազրիկ Սեկոյանի, այնպես էլ Արշակ Պողոսյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումներում առկա չէ նշում՝ փողերի լվացմանն ուղղված գործողություններն իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կատարված լինելու մասին, ինչպիսի պարագայում հիմնավոր չէ սույն քրեական գործը ՀՀ հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա լինելու մասին հետևությունը:

Բացի այդ, Դատարանն իր անհամաձայնությունն է արտահայտում Երևան քաղաքի առաջին արյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի կողմից սույն քրեական վարույթն ըստ ընդդատության ուղարկելու մասին 2025 թվականի օգոստոսի 26-ին կայացված որոշմամբ արտահայտված այն դիրքորոշմանը, որ Վազրիկ Սեկոյանին և Արշակ Պողոսյանին ներկայացված մեղադրանքն անմիջականորեն կապված է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա՝ թիվ 83160718 կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթի հետ, ուստի հաշվի առնելով արդարադատության շահը, այդ թվում՝ վարույթի պարզաճ և համակողմանի քննությունն ապահովելու անհրաժեշտությունը՝ թիվ ԵԴ/0574/01/25 (նախաքննական համար՝ 83171324) քրեական վարույթն ընդդատյա է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին:

Դատարանը հարկ է համարում նկատել, որ օրենսդիրը սահմանել է առարկայական ընդդատության հարակ կանոններ, մասնավորապես՝ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա են ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթները: Օրենսդրի կողմից առարկայական ընդդատության այլ կանոն, այդ թվում՝ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա վարույթին անմիջականորեն կապված այլ վարույթի մասով, չի նախատեսվել:

Ինչ վերաբերում է վարույթի համակողմանի քննության վերաբերյալ Երևան քաղաքի առաջին արյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատողությանը, ապա Դատարանը փաստում է, որ սույն դեպքում թիվ 83160718 և թիվ 83171324 քրեական վարույթների՝ մեկ վարույթի շրջանակում քննությունը

գործնականում հնարավոր չէ, քանի որ Մ.Մ-ն և Լ.Ա-ն բացակայում են Հայաստանի Հանրապետությունից և վերջիններիս նկատմամբ հայտարարվել է միջազգային հետախուզում:

Դատարանը հարկ է համարում ընդգծել, որ սույն վարույթի և թիվ 83160718 քրեական վարույթից անջատված մեկ այլ՝ ԵԴ/0625/01/25 վարույթի միացումն արդարադատության շահերից չբխելու վերաբերյալ դիրքորոշում են արտահայտել նաև ինչպես թիվ ԵԴ/0574/01/25 քրեական գործով նախագահող դատավոր՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի դատավոր Հ. Ավագյանը (...) այնպես էլ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի նախագահ Մ.Մարտիրոսյանը (...), որպիսի պայմաններում մերժվել է թիվ ԵԴ/0574/01/25 և ԵԴ/0625/01/25 քրեական վարույթները միացնելու մասին նույն դատարանի դատավոր Ա.Կարապետյանի դիմումը: Դատարանը փաստում է, որ թիվ 83160718 քրեական վարույթից անջատվել են ոչ միայն վերը նշված վարույթները, այլ մի շարք այլ վարույթներ ևս, մինչդեռ ինքնին այդ երկու վարույթների միացումը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի նախագահի կողմից գնահատվել է որպես արդարադատության շահերից չբխող, որպիսի պայմաններում անիրարեասական է նաև նախաքննության փուլում գրնվող թիվ 83160718 և թիվ ԵԴ/0574/01/25 քրեական վարույթների միացումը և մեկ վարույթում քննությունը:

Այսպիսով, Դատարանը, հաշվի առնելով քրեական գործով քննության առարկա հանդիսացող ենթադրյալ հանցանքների բնույթը և մինչդատական վարույթում մեղադրյալներին մեղսագրված արարքների քրեաիրավական որակումը, գրնում է, որ թիվ ՀԿԴ/0232/01/25 (ԵԴ/0574/01/25) քրեական վարույթը ենթակա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին, քանի որ այն չի հանդիսանում ՀՀ քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վարույթ (...)»⁴:

Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.

9. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ/0574/01/25 (ՀԿԴ/0232/01/25) քրեական վարույթն ընդգատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

10. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք»:

11. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

⁴ Տե՛ս քրեական վարույթ, հատոր 39, թերթեր 5-31:

«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»:

11.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, «օրենքի հիման վրա ստեղծված դատարան» հասկացությունը մեկնաբանելիս նշել է. «Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»⁵:

Միևնույն ժամանակ, դատական մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. «Ներպետական դատական արյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»⁶:

12 Վճռաբեկ դատարանն անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հիմնարար նշանակության վերաբերյալ իրավական դիրքորոշում է ձևավորել *Գևորգ Հարությունյանի* որոշմամբ⁷:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Մարզերի առաջին արյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին արյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին (այսուհետ՝ առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարան) ընդդարյա են առաջին արյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, ինչպես նաև դատական երաշխիքների բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ, այդ թվում՝ դատական երաշխիքների վարույթների, որոնք ընդդարյա են հակակոռուպցիոն դատարանին*»:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ «1. Նախնական դատախոսների ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդարյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդարյության:

(...)

5. Վարույթն ըստ ընդդարյության սրացած հակակոռուպցիոն կամ առաջին արյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատախոսներ նշանակելը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում վարույթը

⁵ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

⁶ Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

⁷ Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

Վճռաբեկ դատարանն ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

(...)

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում արանալու պահից տասնօրյա ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Բվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը փաստելով, որ մեղադրյալներ Վ.Սեկոյանի և Ա.Պողոսյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում է հարուցվել, ի թիվս այլնի, այն բանի համար, որ նրանք մասնակցել են Մ.Մ-ի և Լ.Ա-ի կողմից ստեղծված և ղեկավարվող հանցավոր կազմակերպությանը և դրա կազմում կատարել առանձնապես խոշոր չափերով փողերի լվացում, ինչպես նաև վերջիններիս վերաբերյալ թիվ 83171324 վարույթը դեռևս նախաքննության փուլում անջատվել է թիվ 83160718 կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթից, գտել է, որ սույն քրեական գործի քննությունը Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում անխուսափելիորեն կհանգեցնի մեղադրյալների արդար դատական քննության հիմնարար իրավունքի խախտման⁸:

- Հակակոռուպցիոն դատարանը, արձանագրելով, որ մեղադրյալների նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշումներում առկա չէ նշում՝ փողերի լվացմանն ուղղված գործողություններն իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կատարված լինելու մասին, գտել է, որ սույն վարույթն ընդդատյա չէ Հակակոռուպցիոն դատարանին⁹:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ սույն վարույթի նյութերի, այդ թվում, մեղադրական եզրակացության¹⁰ ուսումնասիրությունից հետևում է, որ Վազրիկ Սեկոյանի և Արշակ Պողոսյանի վերաբերյալ թիվ 83171324 քրեական վարույթն անջատվել է կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ թիվ 83160718 վարույթից, և վերջիններիս վերաբերյալ է Մ.Մ-ի և Լ.Ա-ի կողմից ստեղծված և ղեկավարված հանցավոր կազմակերպությանը ենթադրյալ մասնակցություն և, ի

⁸ Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

⁹ Տե՛ս սույն որոշման 8-րդ կետը:

¹⁰ Տե՛ս քրեական վարույթ, հատոր 36, թերթեր 121-275:

թիվս այլնի, դրա կազմում առանձնապես խոշոր չափերով փողերի լվացում: Վերոգրյալից բխում է, որ Վազրիկ Սեկոյանին և Արշակ Պողոսյանին ներկայացված մեղադրանքներն անմիջականորեն կապված են Հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա հիշյալ կոռուպցիոն հանցանքի վերաբերյալ վարույթի հետ:

Հետևաբար, հաշվի առնելով արդարադատության շահը, այդ թվում՝ վարույթի պատշաճ և համակողմանի քննությունն ապահովելու անհրաժեշտությունը, գտնում ենք, որ սույն քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

16. Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ Հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/0574/01/25 (ՀԿԴ/0232/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, հիմնավոր չէ:

17. Հետևաբար, գտնում ենք, որ թիվ ԵԴ1/0574/01/25 (ՀԿԴ/0232/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

Վազրիկ Կարենի Սեկոյանի վերաբերյալ՝ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 223-րդ հոդվածի 2-րդ մասով և Արշակ Ռաֆայելի Պողոսյանի վերաբերյալ՝ երկու դրվագ 2003 թվականի ապրիլի 18-ին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով, 189-րդ հոդվածի 1-ին մասով և 223-րդ հոդվածի 2-րդ մասով թիվ ԵԴ1/0574/01/25 (ՀԿԴ/0232/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Հակակոռուպցիոն դատարանին:

**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ
ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ**

**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ
ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ
ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ
ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ**

**ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ
ՀԱԿԱԿՈՐՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ
ՆԱԽԱԳԱՀ
ԱՐԹՈՒՐ ԴԱՎԹՅԱՆ**